



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

9621

9622

9623

9624

891.99

10.15

ԸՆԴ ԵՂԵԻՆԵԱԻ

ՅԱՄԱՅՈՒԹԵԱՆ ԲԱՅԱՎԱՅՐԻ

ԽՈՐՀՐԴԱԾՈՒԹԻՒՆ

Հ. Ղ. Արշակունի



ՎԵՆԵՏԻԿ. — Ս. ՂԱԶԱՐ

1874

30

ԸՆԴ ԵՂԵԻՆԵԱԻ

2346

891.99

ԸՆԴ ԵՂԵԻՆԵՍԻ

ՅԱՄԱՅՈՒԹԵԱՆ ԲԱՅԱՎԱՅՐԻ

ԽՈՐՀՐԳԱԾՈՒԹԻՒՆ

Հ. Ղ. Աբղահյան



7622-57

ՎԵՆԵՏԻԿ. — Ս. ՂԱԶԱՐ

ՄԻԹԱՐԵԱՆ ՏՊԱԳՐԱՏՈՒՆ

1874

ԸՆԴ ԵՂԵԻՆԵԱԻ

ՅՍՄԱՅՈՒԹԵԱՆ ԲԱՅԱՎԱՅՐԻ

ԽՈՐՀՐԳԱՅՈՒԹԻՒՆ

Ա.

Ողջն ընդ ձեզ, վայրբ խաղաղահանք, ան-
զբաղ գաղարբ մասխոհումեանց, անգորբիչք սրբ
տից: Ողջն ընդ ձեզ ամայուեթիւնք անմարգա-
ձայնք, ուր ոչ այլ որ շփոթել կարէ զանձն՝ բաց
յանձնէ: Ողջն ընդ քեզ, գեղեցկուեթիւն վայրի,
անտխեղձ ծնունդ հաճուեթեան Արարչապետին.
գեղեցկուեթիւն, յոր չեղև ձեանամուխ արուեստ
մարդոյ, կապուել կամ արաակէ զբոլն պարզու-
նակ, զոր 'ի սկզբանցն և այսր արկեալ զքե՛ կա
և երևիս միշտ նորախայծ միշտ վայելուչ:

Ողջն և քեզ, սլ հրեշտակ կամ շահապետ
անգորբացեալ վայրացս: Մի՛ վրդովիր, եթէ
սիրտ մի ավմբկեալ և հօգի հօգած՝ սպրդեալ կայ-
ցէ յանբոյժ հանգրուանս քո: Աչ 'ի խռովել զգր,
այլ 'ի խաղաղել զանձն իմ՝ եկի ես: Սիրտ ունիմ
վիրաւոր, և բժշկել փութամ՝ բնուեթեանս օպե-
ղանեաւ: Ընդ երկար մտավէժ տանջեալ 'ի տար-

օրինակ զխաղ և անցից՝ առ տնին և տրատրին, էլի 'ի մենարանս յայս՝ զիւր և զուշ գտանելէ զէթ առ վայր մի հանգուցանել զվարպար չոքս հոգւոյս՝ յանհասանելի խորս վերնական Տեսչու թեանցն: Ի տան և 'ի քաղաքի՝ ոչ միայն յուզին և ծփին սիրաք, այլ և որպէս այլիք ընդ այլն մարտուցեալ հանապաղ՝ խորատկէն և խորտակին. և էթէ անդրէն ինչ կարկառային՝ դարձեալ միւստնգամ 'ի նոյն կտքաւէն կադ և կախ. իսկ 'ի միայնութեան այսպիսում, 'ի խորին գոգս բնութեան, սիրտ՝ զերն եւթ լսէ բարսիսին, և ցտճուցեալ զխնայի, որպէս շիթ մի փրկուցեալ և իսկ և իսկ լուծեալ 'ի տարր համադալ:

Բարեւ. քանի՛ թեթև են շունչք 'ի բացալայրի. քանի՛ համարձակ են օրքս և անուշակք. քանի՛ աղատակիք սահմանք այս և հէշտակիրք: Ղիարդ ես ինքնին այսպէս յանկարծս թեթևացեալ՝ թուիմ սրավարել թիօք իմն քան թէ ստիւք, հեռի 'ի հէտոց շինից գաստակերաց, և հուռ յանդրաշէն արտարծս: Հովտք հովտաց անդի տան և բլուրք բլրոց. զիբք զդիր թաղուցանեն և երևեցուցանեն, և սահմանք փակին և բանան զսահմանս: Աջ խոնձութիւն, ոչ վտտակ, այլ հաճութիւն և գոհութիւն տայ ինձ դագարել տատանոր՝ յարձուակի ընթացիցս: Եւ զկայ ստեալ 'ի բարձրագոյն կէտ զաշտաշտախս, 'ի լեւնաբլուրս յայս, — որ որպէս մեծակառոյց գահաւորակ վերականգնեալ զին 'ի վերոյ բլրոց բաղմաց, պարահայեաց զխելով մինչև 'ի սքանչելի անբաւութիւնս ովկիստու, — ահանշմարեմ փոքր 'ի շտակ տատուտ՝ զանձերանայի երեսս համափիւս անդնդոյն, որպէս ակն մի մեծ աղամանդեայ փողփողեալ ընդ նշողիւք սկանն արևու: Եւ որպէս հովանոց գեղեցիկ գահաւորակիս 'ի կատար բլերս, 'ի բացեայ 'ի նմանեացն և յամե-

նայն ծառոց, ամբառնայ մեհաւոր ծառս այս եղնեայ, մեծ և աճիւրդաճիւղ, և կայ 'ի հաստոջ զալարութեան և կորովս, որպէս արդեօք յաւաջ քան գերերիւր ամս և աւելի: Եւ որբանիք և որպիսիք ոմանք յաւաջ քան զնս նքստեայք ընդ ստրին հովանեալ՝ հանգէս արարին խորհրդոց և կրից իւրեանց, որպէս վկայ կամ ապաստան փաղկեաց սրայիցն ունելով: Ղի ոչ վայրպար իմն մենացեալ սարաւանդեալ թուի ինձ սա յապալեր բլերս, այլ 'ի տեսութենէ իմքէ անկեալ և պատրաստեալ 'ի սնար գահոյից և 'ի հովանի զլնոյ՝ որ զոգեալ խոկայցէ 'ի զազփաղփուն խելամաութիւնս մարդկան և յանյեղափոխ խորհուրդս Արարչին: Տեսարանք զանազանեալք հովտացս և ծովուն բացականի՛ ելելէս անելով զերեբք՝ նկրախ կորգել յինքանս զուշ մացս. և ոչ գիտեմ, 'ի մեծութենէ և յորովութենէ սեպեանցն արդեօք ընկճեալ, էթէ 'ի ներգործութենէ մերձաւորիս գրաւեալ տեսութիւնս աղօսանայ, և լսելով թիւնս զորանայ յոյժ յոյժ:

Քանզի յարեմտից շնչեալ կողմանէ հողմն հարաւախառն յախուան և հզօր, ընու զընդմէջ երկնիս և երկրի: Աղամտիկ տեսարանս, և ամենայն ինչ զազազակ բանայ: Ամենայն տունիք տատանին, ամենայն խոտ և խալիք հծծեն և վարին թաքթաբուր. բլուրքս թուին խոնարհեալ և դաշտքս վերացեալ. և ծառս այս եղևնեայ՝ սա մեծաձայնագոյնս ևս հնչէ և շալէ, շընձէ և շառաջէ, տատանի և տագնայի. նշաւակ իմն և նպատակ կանգնեալ բանութեան հողոյն, յինքն ձգելով զյորդութիւն օրեղէն հասանացն, որպէս հողմաղայ մի հանգրուանայ, կամ անխ մեծի մեքենայի, անգագար հողմէլով ոտտոլք և կողերով մերթ խոնարհելով և զգլուխս իմ կոծկելով և

մերթ ընդ երկինս ամբարձեալ՝ իբրև զԹու թեան
 ծափս հարկանելով, և ոչ երբեք լռելով՝ ի հում-
 ձայն հնչմանցն և յահեղ ազազակէն. որպէս թէ
 պահանջք ինչ իցեն իւր՝ ի բնութենէ, կամ բարոզ
 կարգայցէ՝ բերան եղեալ լուծել վայրացս: Այն
 քան զօրանայ յիս ազգուն վայց և վանկից հող-
 մակոճեալ եղևնոյս, զի միայն զի գրգեալ վարին
 յանուր յանկայր վայրս, և ի կիրս ոչ անհաճոյս
 ախրութեան. յոր և սակաւ խորասուզեալ՝ ամ-
 շխմ, և ոչ բաւեմ համօրէն պարզել զօր զգամս:
 Մերթ խլացեալ զանկանամ, և մերթ զամենայն
 կարծեմ ձանաջել յստակ, և վերսկսմ. և որպէս
 պատառք ամպոցս սահեալք ընդ արեգակամբս,
 մերթ նետմանամ և մերթ լուսանամ: Մերձ ընդ
 մերձ յոգւոց ելանէ, խառլի և խաղաղի, սարսէ
 և սիրէ սիրաս այս ի ծոցի իւրում:...

Չի՞ դու. զի՞ քեզ, ծառ ծփակոճ, առնի մի՞ ի
 անկոց, և հինաւուրց և մշտամանուէ: Աս իմ՝
 կաս կուռեւալ լրի անջառ ի մենաւոր գահաւան-
 զիս, մասնեալ կամ անձնատուր՝ ի զբօսանս
 վայրենի հողմոցս. որ ընդմտեալ ընդ ոստերգ և
 ընդ կողերգ՝ որպէս ընդ փողս եզեգանց երգիոնի
 մեծի՝ հնչեցուցանէ զընդարձակութիւն ամայա-
 թեանս. յեղանակ անարուեստ և ամենարուեստ-
 ներդաշնակութիւն անյօգ անձարմանս. զմայ-
 լումն սրտառուէ: Մի՞ արդեօք իջևան իցես, ե-
 զնինդ, վերնառաք պատգամաւորի, լսելի առնել
 զհրամանս երկնաւորն թաղաւորի, որ յստակա-
 գոյնս լսիր ի հնունս անդ՝ ի վայրս բացականս,
 մինչ չե եր պարսպափակ ասարաց կանգնեալ
 ի տեղի պաշտաման. և բարբառեր ի Բեթելս
 բան խորհրդաւոր. կամ սաւառնայեալ ի ասն-
 ձիս և ի պրակս անտառաց, ասրուբերեալ ան-
 բուցն զրգմամբ՝ մերթ յորդորելով զհովուէմա-

նուէն զգօն՝ ի մարտ պատերազմի ընդ ասեկանս
 Աստուծոյ, մերթ ի մարդարեւութիս յափշտակիչս
 մտաց և սրտից: Ո՞վ ձայն ազատասուն, որ արհա-
 մարհեալ զէն և զզատուար՝ ընթանայիր յար-
 ձակավայրն, որպէս հրէշ իմն անձանօթ յանձա-
 նսթից արտավազեալանդիպոց, որտառելով ի վերայ
 ջուրց գետոց և ալբերաց, մտնելով յանձայրա-
 ծաւալ կոհակաշարժութեան ծովուց, կուկոճելով
 զկողերս կաղնեաց, փշրելով զմասաղատունիս
 մայրից Լիբանանու, շարժելով զանապաստ կար-
 ծրակուն լեբամբք հանդերձ: Եղն ինքն և աստա-
 նօր թուխ ինձ՝ ձայն ինքնաբուզի, նշանակեալ ի
 խորանկատ Տեսողէն, սուրհանդակ ամայութեց,
 մահապոյժ և կենսաութիւն: «Չայն բարբառոյ յա-
 նապատի», հանապազմապաղ ընդ երկին և ընդ
 երկիր, գօթեալով մշտամտուէն ի վերայ համաշ-
 խարհականն գերեզմանի: «Աննայն մարմն խոտ
 է», և որպէս ծաղիկ և խոտն վայրի անցանէ ա-
 րադարաց, և ոչ ևս երկի տեղի նորս, այլ «Բան
 Տեսան մնայ յախտան»:

Արդ ընձ ամայութիւն տեղոյս ամայագոյն ևս
 եղանի. զսաղայ չարժի ինչ աստանօր, բայ յու-
 սոցս տասանելոց, ի խոտոյ և ի խուռէ. և ծով
 բացաձիգ՝ ասրպատակ ելելէջլեքն գանդաջելով
 յալ և յահակ ինքն զինքեամբ զսաւածեալ զե-
 ոայ: Մտաց ի ծագս ոլորտից ջրուին ծուկնք
 ամպոց, պարզութիւն կապուտակայնիս բոգա-
 ցեալ ձկաի որպէս ձեզուն համապարփակ ծովու
 և ցամաքի. յորս տաղաւարեալ կամ մակուկեալ
 դեգերին մարդին յաղդէ յաղդ, և մի ըստ միօնէ
 լբեալ զլերս որպէս անցեալ գնան: Յիշատակք աղանց
 դարուց որպէս բեկորք ծովակաւր նաւկներոյ առ
 վայր մի ծփեալք ի ծայրս կոհակաց՝ աս՝ առ ս-
 լաղին զխալուսեալք դնին: Ո՞վ անարդէլ հօ-
 սանք հաղմոց. ո՞վ անգրժէլի օրէնք ժամանակաց.

այդպէս առ ոչինչ վճարէք զամենայն ճիշն մարդկութեան 'ի վերայ երկրիս այսորիկ, զոր կարծէն տապարեղ զօրութեան մտաց իւրոց և բազկաց և ըզձից սրտին: Սիրտ՝ որ հանապաղ նորա նորս հնարի ճարտակս և ճաշակս: սիրտ՝ որ երբեք ոչ սակ շատ: սիրտ՝ որ քապքնելով ընդ մահ՝ զան մահութեան ճիշն խոյանս, նաև յրնկզմելն 'ի յեղեղուկ զբոսանս կենցաղոյս:

Բ.

Վահ: Եւր իցեն, յով գնացին, զի եղեն այնքան յընհայտ ասձիք ազանց և լեզուաց մարդկան, սիւսելոց ընդ երես երկրի, զորս տեսնեմ յոյսմ 'ի միտովայրկենի կուտալս կուտակեալս գաս առ գաս ջոկ առ ջոկ խիտ ընդ խիտ, որպէս երամբ հաւուց կարկաչելոց 'ի սառնապատ խուծս և խարակս Հիւսիսահանն ծովու: կամ բանակք մարտայ յանգաստանս Սիջադեաաց և 'ի միւստով վայրկենի զամենեանս առ հասարակ գտանեմ անկեալ և անցեալ, և տառել քան հողով և աւարով՝ ընդ մուսացութեանն թաղեալ ցուրտ ծածկութիւ: Ա՛հ: սրբան անբաւ է բոյս մարդկութեան, որ երկայ և չորիցս սերմանի և հնձի 'ի հարկութեայ մի գարու: և դարբ եօթմանտուն զիղեալք կան 'ի նոսրամարդոյ անտի և այսր: Ա՛հ: սրբան հասակք մարդկութեան տապաստ գնին առ օսս հնձողին: և որպէս շալակ գուզնայրայ դերանդասոր խտայ վայրի, զայն ամենայն սերունդ ադամեան բարձեալ 'ի ստեւեալ թիկունսմ՝ հանապաղակիրն այնորիկ մահ և ամանակ, յածեալ շրջին տակաւին անխանք: նկատեն և մկրտան: և ոչ մուշին երբեք դարձապարք գորուզի գրողին: ոչ բթե բնու կրա-

րին կենաց: և ոչ ևս գառնայ՝ զոր ժամանակ վարէ և մահ կրէ:

Աւաղ բազմութեան նորախայծ կենացն, որք վազվաղ շիջանին որպէս ճրագունք եղեալք յանցս իցոմոյ: անձինք վազանցուիք, յորոց շատք այնք կցեն զոր և աղայս անգամ չէ մարթ անուանել: այնքան արագ արագ անցին 'ի խաւարէ արգանդի 'ի խաւար գերեզմանին: Յօրովագոյն են սակաւակեացք՝ քան անուանեալքն երկարակեացք: նուազունք յոյժ խանք և ծանրացեալ ամօք ժամանեն 'ի հանդիստ: Իսկ արդ առ իմէ այնքան բազմութիւն ծնելոց՝ եթէ չէին սպրեւոց: զի՛նչ բերին նոքս յերկիրս յայս, կամ զի՛նչ բարձեալ տարան յերկրէ աստի: . . . Եւ զի՛ փոյթ է կնձ դիտել զաւժամայն և կի և զաօրեայ անցս երուխայի մարդկութեան, մինչդեռ զանխուլ մնան կնձ փաստք կենաց և յամեցողայն 'ի վերայ երկրի: . . .

Զի՛նչ գործեցէք նախահարբք հազարամեայք, յառաջին դարս անդ ժամանակոց՝ 'ի վերայ երկրիս այսորիկ: միթէ միայն վաստակեցայք 'ի սլատառել զընդերս նորս և հայծ հայծել զոգեպաւհիկդ անպարտք: կորաբամակ կրելով զորս յիկն սպասեալ տարևոր ժամանակաւ՝ 'ի կանանցդ և 'ի մանկաւոյ, և յաշտեալ 'ի փոջ և 'ի տատակի: Գուցէ 'ի հարթել և 'ի կակղէ զերես և զձոցս երկրի, 'ի պարարտակ զանօթս հողագործութեան և շինարարութեան, և 'ի նուաճել զանտոււնս յօժանդակութիւն վաստակոցդ և 'ի պարէն սկիտոյն կենաց, 'ի հերքել ըզհոյս մխտիկ զազմանաց և հաւուց, և յընտելացուցանել զօգտամտոյցսն: յայսպիսիս ասեմ ըզբազեալ զամենայն ժամանակս կենաց և դարս երկարս, ոչ բաւեցէք թողուլ թուանցք յեանոց՝ յիշատակ մի երևելի: և ոչ իսկ զմարմնոցդ յեաին նշխար, զոր փիղ և արջ և այլք 'ի դազանայ հա-

սուցին և յետ հազարաց ամաց ցմերս դար, 'ի քա-
րածերպս կամ 'ի խորս խանթից երկրի: Բայց
եթէ և նախահարց մարդկութեանս մնացեալ
բաւեալ էին մինչև առ մեզ կմայքն տխեղծք,
որ արդեօք սիրօհման էր մեզ յայնմանէ, բայց
գիտեւ հաւաստեալ զի կեցեալէն այնքան մար-
դիկ, ոչ այլ ինչ թողլով յիշատակ՝ բայց զան-
ցիցն իւրեանց:

Աջ հաւանիկ բովանդակն իսկ արևմտեան կի-
սագունա երկրիս՝ տարածեալ 'ի սփեռս ուկիա-
նու՝ բեւեռն 'ի բեւեռ, — որպէս զմի յաննշան կըզ-
ղեաց Կիւիլազայց, կամ Մայլանդիկն այն աշխարհ
կեղահարծ՝ առարկեալ 'ի գեղաբան իմաստասի-
րեն, զոր այլք 'ի բանասիրաց խնդրեն և ոչ գտա-
նեն, գտանեն և ոչ հաւատարմացուցանեն, —
հաղիւ գեռ յառաջ քան զամս 400 եկն 'ի ծանօ-
թութիւն արևելեան կիսագնախ, և Կոր կոչե-
ցաւ աշխարհ. թէպէտ էր ճին ոչինչ ընդհատ, և
զուգակից նմին կրեալ և սնուցեալ ազգս մարդ-
կան բազումս՝ ընդ հազարս ամաց, որովան և
շտեմարան երկու խոցին. յորոց սակաւուց ոմանց
մնան նշխարք շինութեանց, որպէս Մէխիկացն և
Բերուաց, յորս հնազանդիքն նշմարեն տիպս ինչ
զուգանմանս ձեւագործաց Կիլոսական աղան
լիբիոյ: Եւ ո՞ գիտաց զանցս անցից սղպացն այնու-
ցիկ՝ յայնքան հազարս ամաց... Իբրև վայրա-
պար ուրեմն անցին այնքան սերունդք բազմաբե-
զու գրոհնից Ամերիկոյ, որպէս բոյսք լերանց և
ձորոց բացականաց, որ շղպարն 'ի բուսն մարդոյ,
գուցէ և 'ի ճարակ երէց, ծնանին մեկուսի և
ծնին միայնակք 'ի զանխուլ ծոցս բնութեան:

Այլ զմէ զարմանալ ընդ ամայութիւնս Ամե-
րիկոյ, մինչ մեծ մասն և բոլոր միջոց ծանօթն
կարծեցելոյ մասին աշխարհիս՝ անծանօթ մնա-
ցեալ այսքան յորով դարս, հաղիւ հաղիւ բազ-

մախոյղ քննութեամբ աշխարհաչրջիկ արանց դ-
մանց՝ գեռ ևս սկսանի սակաւ ինչ ծանօթանալ
Ամերիկիոյ, զոր առանն ճին կըբեաց նորանորս
միշտ արագորէլ, և յետ գիւտի Կորոյ աշխար-
հին՝ ծովեղեթեայք միայն ճանաչելին. և այս չորք
գարբ են, մանաւանդ թէ աւելն քան 44 դարք,
զի տակաւին մեծ մասն մէջերկրեայցն իբրև մա-
ռախլաւ պատեալ՝ թարբուն մնայ 'ի գիւտնոց ան-
գամ: Կսե ծանօթագունինցն և հասկեկունցն Ե-
թէովպական և Եգիպտական ժողովրդոց հրաշա-
կերտ և սիրալի ձեւագործք՝ առ փոքր փոքր թօ-
թափեն զաւազ և զիողի գարուց, և մարմինք
զմեաւաք 3000 ամեայ մեռելութեամբ՝ ստիպեալք
անկենդան յարութեամբ, վկայք կանգնին մա-
հուն՝ յորմէ ոչ կարացին իտւտափել ամենայն
արուեստիւն իւրեանց, և անմահութեան՝ զոր
ընդ աղօս իմն նշմարեցին անգուտս: Քանզի և 'ի
վսեմական ճակատ հակոյցակոյտ կարկառացն այ-
նոցիկ՝ բրգանց և սփինդայց, ապարանից և մեհե-
նեաց, կոթողաց և կարկառաց, երևին նշանք սնո-
տիպաւորուտս մնաց, սթիպք կատուի և ցեծոյ,
տիտուն և բնդուն, 'ի մահարձանս փռատպանծ
Փարաւանաց: Այլ հնապարծիկ աշխարհ, այդ-
քանեօք և այգպիտեօք ձեւագործօք՝ հիացուցա-
նես զիս, այլ ոչ հանդուցանես, չառեօք և Սե-
թովք աշխարհակալք քո և աշխարհաչեղք՝ թո-
ղին ապաքեն նշանս և կոթողս մինչև 'ի Տուրս և
'ի Կովկաս, այլ ոչ և 'ի սիրտս տեսողաց: Մահու-
քան կենդանութեան են յիշատակբք. և թէպէտ
բազում ուրիք ճիւղեցան կերպարանիւ զան-
մահութիւն, զայդ ոչ զլանամ, այլ զի յոյժ
թանձր ստուերօք նկարագրեցին զճշմարտութեւ,
և ոչ կարացին կամ ոչ կամեցան բառնալ զքօղ
նորին և բացերևակի հայել 'ի գէմն քանչեւոյն,
հողմնս որտաւորբ գուժէ ինձ և զուշայնութիւն

Եգիպտոսի, և զգրացեացն: Ջձէր խի, ո՞վ շա-
 շատան գատեղք և ակինայք պեաց, Տիրոս և
 Սիզոն, և վեհադոյնդ զորս թեհամք՝ կարբէ դոյնը,
 որք ընդ Հոռովմայ և ընդ Մակեդոնացւոյն իշխե-
 ցեք գալ 'ի վեեր, որք զժով և զցամայք մարտելք,
 և արգ ընդ մէջ ծովու և ցամայքի աւերեալ և ընդ-
 աւաղեալ դինք, որպէս սափորք փորեալք, նշա-
 նակք նաւորին և հանգրուանք ստուապելոց:

Այ աւելի ինչ աւանդեալ գտանեմ մեզ և հզօ-
 րագունից և հարստագունից ինքնակալացն Ասիոյ,
 որք երբեմն որպէս ստուռածու թիւրք իմն եր-
 կաւորք՝ գահոյս արկին 'ի միջհատկտա Յփրա-
 տայ և Տիրիսի, և պղնձածոյն ցանկելու աւա-
 ճեալ ունեին զազգս և զաշխարհս հեռաւորս,
 զեւանական և զըսշաական, զմէլերկրեայն և ըզ-
 ծովեղերեայ. յԵգիպտոսի արմանց մինչև յերկնա-
 շտասին Յմանն, և յըմբոստ սարից կովկասու՝
 մինչև յաւաղարիբ ամայու թիւնս Արուսայեաց և
 յունջ Խողաղականն ովկիանու: Բառուք 'ի բաւնց
 յափշտակեցին զմեպտեասականն գաւազան ընդ
 երկարու թիւն երկուց հողարաց ամաց, զգահա-
 նիսան և եւծ փոքրիտելոյ Հրամանահան իշխանու-
 թեանն, մերթ 'ի Քալունէ, մերթ 'ի Նինուէ, և
 մերթ 'ի Բարեւոն, կամ յԵկրատան և 'ի Ծոշ-
 կեղորոնք համաշխարհական զբոսանաց, յորս՝
 որպէս ընդ ոսկեղն և պարզայն հոսեալ զեղջր
 ամենայն մեծութիւնն ազերձու թիւն աշխարհի,
 և սփռեր զբաղմանպատիկ հրատոյրսն ընդ բազ-
 մահարիւր գաւառս ազգաց և լեղուաց նուաճե-
 ցելոց. որոց պեայք և իշխանք իւրաբանչիւր՝ հրա-
 ւերեալք հանգոյն իմն հարկապիր Հրամանաւ գո-
 սազագունին բունակալոց, — այնմ՝ որ կանգնեաց
 զ՝ ՍՅ կանգնեան պատակեր իւր ոսկեսար՝ 'ի գաշ-
 տի անդ 'ի երայ, 'ի ժամադրեալն պահու՝ 'ի միա-
 ձայն ազգման թմեկաբարբառ նուագարանացն՝

գալ 'ի պաշտօն երկրպագութեան, — խուճէին
 կուսեկն 'ի կայից կայից և 'ի ծագաց սահմանաց
 որք ոչն ճանաչելիս զերկար, և որոց ոչ եր լուեալ
 զբարբառ միևնանց, անկանեղ թաւալել առաջն
 անդրոյն, կամ այդորեղ 'ի դրսն արբունել 'ի ծա-
 գել արեւուն, որպէս խուճանք պեաց 'ի հրոսել
 հարսուոյ 'ի ծոց մի ծովու: Եւ այն ամենայն՝ առ
 'ի հեշտ և 'ի համարս որսի միոյ քաղղէի կամ ա-
 սուրոյ, որ ոչ ինչ աւելի քան զայլ մարդ ունե-
 լով. (քաւ 'ի շամբուշ ամբարտաւանութեանն),
 կարծէր զինքն իշխան կենաց և կամաց առհասա-
 բակ մարգկութեան, և վաշ վաշ կարգայր յան-
 ճին իւրուս: Սակայն ոչ կարացին կալ 'ի կայի
 իւրեանց, ոչ անդրինք բարձրագիտաիք և ոչ
 կանգնողքն բարձրասիրոց, թեպէս և ճուշտաբ
 յոսկուց և յարծաւոյ, 'ի պղնձոյ և յերկաթոյ-
 այլ զի՛ ըստ Տեսանողին, 'ի արունս և յոսս խեցե-
 զննս յեցեալք կային, ոչ բաւեցին բանալ ընդ
 երկար զհասակն ստեքացեալ. և ահա քարիկ
 փքրիկ փրթուցեալ 'ի լլոցոյ, որպէս երևումա-
 ցան նմս, թաւուէր՝ գայր բաղկեր ընդ վիժխա-
 րին՝ պետին թեղոյր, սարսկն տեսող, և խիկ
 խիկ լուծաներ աշ և հոյն հզօրին. զորօրինակ հօ-
 վանի խուճափեալ յանկանել սոսաճագաղ կաղ-
 նոյ 'ի կոփիւն ասպարաց: Արպէս երիտասարդք
 յանդգունք մրցեալք ընդ կաշմունն փոյնիկոյ՝ մի
 ըստ միոյն անկան Ասոր և Բարեւել Բաղդէայն և
 Մար, Պարսիկն և Պահլաւ, Հեղին և Հոռով, առ-
 աժութք գարուց ժամանակաց և սղզաց նուաս-
 տագունից: Եւ կիսամերկ Տաճկիկն անապատա-
 սուն, ցեղապետ մի վաչկատուն, զամաճն Քուր-
 դիկ՝ հեծեալ ասոր 'ի սրնս ճոխարակեայս,
 կամ նստեալ 'ի վերայ եռադիմակ պատկերացն՝
 (մարգագէմ, ցլազուխ և արծու թեւ), կամ ընդ
 հովանեաւ կիսաբանդ զրանդուց սաճարաց Արև-

դի, ծխեն անփոյժք և անկարեկիրք զձուին հեշտարեր. օրինակելով ինն զժխանման ցնդմունս մարդկայնոց հեթեթանաց, և զանհաստատութի հաստատագունից անգամ համարելոց իրաց և արանց: ... Ա՛յլ մեծակառոյց քաղաքամարք աշխարհաց, հարեւրգանայքդ, բարձրաբարձուք և թանճարապարտուք, Բարբլոն, Նինուէ, Պալմիրա, Պարսուպոլս, Թեբք և Մեմփիս, Սլահ և Բալբար, Էլեմուար բերաւորաց և բազմաբնու որերոյ, զնորդ անմունչ կոյք, իբր անշարժ գնիք. ո՛վ մահարձանք մեծագիրք արդոց մեծա մեծաց: Ա՛յլ սնտոխ վաստակ Ժողովոցոց և վեժածք Ժամանակաց: Ա՛յլ ունայն երկուք սրտից և ծնուողք մտայ:

Քանի՛ սակաւք յաշնիւ ինչ մարերեցին, ՚ի ձեանարուեստ կամ ՚ի ստեղծարանութիւն մտայ. այլ նուազուք ևս յոյժ ամբարձին յերկրէ զառ ՚ի վեր, նկատել յառ ՚ի վերայն զլնոց իւրեանց. և ևս նուազուք յարդրեցան խուռն մի թափ անցանել ընդ պարտուրակն երեւիլաւ և յաներեոյթան ձկառէ: Զուջոյն իսկ երկիր յեա հազարամեայ պարագայի, ասեն Ս. Գիրք, խորտուղեալ յանգուեոց ջուրոց, առ ՚ի հեղձուցանել և թօթափել զմարդիկ առհասարակ, վասն ընեւելոյ նոցա մարմին, այսինքն զմարմնոյն եւ թ խոկալով և հողալով չփոյժք անարմնականին և հողեր: Քառմեն ըն պատահար, անշափելի կորուստ: Այլ, աւանդ, զի մարդկութիւն վերաննեալ և աճեցեալ՝ ոչ բժշկեցաւ յախտէն, և նոյն կիրք, բուժազոյն կրից կամ ցանկազոյն, թաղուեալք ՚ի վերայ սրտից պատերազմն ընտանի և ստատկազոյն յարգարեւով քան զարտաքին մարտս պատերազմոց, և նախ ճիր յաճախ քան զամենայն կտորած զինուց: Բազումք իցին վերաւորք սրոյ, այլ անթիւք ՚ի սիրոյ. խոց առաջին և վերք վերջին: Աւագիկ հը-

Կ
Գ
Բ
Գ

զորագոյն հսկայից թալացեալ ՚ի գատակա Գալիլայ. իմաստակազոյն ՚ի մարդիկ՝ կարթեալ ՚ի հրապոյրս գտերն Տիւրոսի. զեցազուք պարտեալք ՚ի գիրք օրիորդաց, և զեք անգամ և որդիք Բարձրելոյ խորագանեալք ՚ի նոյն արեաստ: Իսկ իսկ, — յնչմէ և սարսեմ, — զու իսկ վեշազոյնդ համօրէն հոգեկրաց և սրտակրաց, վկայեալդ յԱստուծոյ՝ այր բառ սրտի իւրում, և զու հարար սլաքան, որ նախ ոտեաւ ՚ի ծոցոյ նախամօր մարդկութեանս, եհար զմարդն առաջին, և զեղեաց զներմն համօրէն ծննդոց նոցին: Քանի՛ զուժարք բանակաց և զուեղք վտակալք ՚ի զին և յասպազէն. քանի՛ արշաւանք ընդ ապստ և անապատ, յերգափութիւնք ՚ի ծովու, պաշարմունք ՚ի ցամաքի, իրամատուցութիւնք քաղաքաց, և որմափորութիւնք պարսպաց, հեղեք արեանց ճապողեաց և ուղիք արտասուաց, վասն զբաւմբածեւոյ կամ հասուցանելոյ զաարփելին առ առափողն. որոյ թերես հանբուս մեծ էր քան զդեղեցիկութիւն, որպէս ցանկութիւնն քան զվայելք, զոր թերես զիշեր մի ամօթալ՝ երո՞ծ արագարագ, և ցայգականն ստուեր ցնդեաց զակնկալութիւն տանն ամաց: Քիտայցին հըբք և աշխարհակալք, թեպէտ և անապոս, զի և յարթկուք արոյնից և զազանայ՝ կ(Թուցեալ ընին ՚ի կամուտգրաւորանոյն. և չէք ստուարագոյն և երկարագոյն կապանք՝ քան զսիրափոկ վարակս, որ խառանեալ զկարող և զսկար՝ ձգեալ տանին ընդ դեր և ընդ գար. կամ ՚ի գերութիւն ցմահ, կամ անդրագոյն ևս՝ ՚ի մահ մանջեանուար. հաղիւ թէ ՚ի բերուց ոք իղեալ զկապանն, կամ կապեալ և ոչ կաշկանդեալ փրձանիցի սըննդամ: Թող արդ ճիշեցին քերթողք և արարողք՝ յեկեական և յեմիսկան հանդերգութիւնս դրուտեալ զգիւցազունս սիրայինս. խուռն ընթացին իմաստունք և անիւ-

մասք 'ի Թատերս, նկատել զհանդէս և զկերպարանս վիրտորաց սիրոյ, զորս բանաստեղծիցն վերարիտէ հանձար բազմապան, և ներգանա կուծիւն նուազարանաց շարմեռլ շարքէ, և փայփայելով յանկուցանեն զսիրտ 'ի պարանս իւրեանց: Սակայն ամենայն արուեստ Սոփոկլեսոյց և Կունէլէսոյց ոչ բախցեն Թաքուցանել զանկղեանս և զաղկաղիտ Թիւն սրայ մարդոյս:

Բայց սակայն զի հասարակաց է վասնդն, կամ զի առհասարակ բնութիւն մարդոյ ընդ պէսպէս ակախւք և կրիւք է գրուեալ, ամարդու թեան թուի չգորովէլ ընդ վերս սրախ և գէթ առաւել ներելիք սխտանք սիրոյ՝ քան սխու թեան. զի առայն՝ ինքնին գրգի սիրտ, իսկ առ այս՝ միտք մղեն զսիրտ: Ավերաւորս սիրոյ տապ պատեն և պատուաստեն վարկապարզի վկասանքն, այլ զվերս և զհարուածս ատելութեան՝ որ առ ամպարհաւաճութեան կամ ագահութեան և կամ որպիտի և է հարստահարութեան, ս' Տարչիցի գովէլ, բայց և թէ անձնանախառ լինել կամիցի: Ալք քան զգործ պատերազմի ամօթալ գործ, չեք քան զայդ անմարդագոյն 'ի մարդու մ. մանաւանդ և թէ զամ մի որ քննեսցէ զպատճառսն և զարդիւնսն, զպարստաութիւն գործոյն և զկատարածն: Հայեաց ընդ գաշտաղցուն ուր հստահեալ ճակատամարտքն մղցան, յառուր Սինտոս մինչև 'ի Կարդէոն, անց ընդ բանակս Բսերքսի, Աղէքսանդրի, Սննիրազոյ, Կեսարու և հազարաց զորավարացն Հուվմայ, ընդ ճամբարս այլս. զան ազանց Ստիւ և Եւրոպոյն, ընդ հրոսակս հիւսիտոյ և ընդ փաշտս անպատաշու Սկիւթաց և Թաթարաց, ընդ համբէն անչափ և անթիւ զինուորութիւնս գարուց առաջնոյ, միջնոյ և վերջնոյ, և ոչ պակուցեալ զարմացիս թէ ի որպէս 'ի վաղնջուց և այսր միտք մարդոյ բերին առաւել 'ի

նուաճել և յանձնտ առնել զաղգ իւր՝ քան յաւնցուցանել և 'ի հաստատել: Առաջ այնքան գալարու թեան հասակացն, որք 'ի վերայ գալարեաց երկրի հնձեցան խափանելով զհունձս արմատաց: Նլբայր՝ թաղէ զէլբայր, և հայր զորգի, զհատուեալ՝ բազում անգամ՝ 'ի հաճոյս միտ մարդոյ, և ճարտարք քարագործք քրտնին կոփել կանդնել անդրիս և մահարձանս հրամանատուաց մարգածախ կոտորածին: Յուլվագոյն մասն մնացուածոյ քանդակաց և արձանաց Եգիպտոսի, Սինուէի և Հուվմայ, և արդի աղայն յիշատակարանք՝ զգործքս մարտից, զպալմութիւնս և զպարսութիւնս, զգերիս և զգերոլոս, զզորավարս և զնահատակս յանդիման առնեն. մեծք համարին մարդիկ՝ որք յաղկապոյն գտան 'ի Ըսդիւն գբազմութիւն մարդկան: Եւ ծաղկոց գորնայնի կողովաւալք 'ի յուսոյ փեսայի և հարսին՝ հիւսեալ կախին 'ի ցուրտ ցուրանս և 'ի կոթողս աշխարհակալաց և յաղթողն անուանելոց: Բարբ. անուն միտ անմոռացուցանէ զայնքան տառապանս տարևոր պատերազմոց. համբան սեթէթեթեալ լուցուցանէ զխորին հեծութիւն գիւղորայից և քաղաքաց, և շուքն շուայեալ ճիւղի վերարկել զճապաղիս անբաւ արեանց որ յերես գաշտաց և ազարակաց, և զկոյտ կոյտ դիականոյն որ ընդ նորք հոսեալ և ծածկեալ աճադարանօք. որպէս թէ վայելազոյն արարածն աշխարհի՝ գարշելի քան զբնաւս իցէ:

Սակայն, մի թէ, ասեն, 'ի զմեր ինչ գործեցին. և առ խոտան համարիցիմք զվաստակ և զհստակ՝ որք վասն հայրենաց պատերազմեցան, թէ պէտ կիցին թէ պէս մեռան: Ա՛հ. արբազան են արգարև հոյրենիք, և խորագոյն կիբք որ առ 'ի նմանէն նըւիրական է սեղան հայրենեաց՝ յետ կրօնիցն սեղանոյ, մանաւանդ թէ անանջրպետ են սեղանքն էր-

կորին, եթէ արգարե զդոն Հայրենասիրութեան
 իցին գործքն գովեալք: զի ոչ է կատարեալ՝ գործ
 որ ոչ սուրից կնիք անմահութեան: Կրօնք էն որ
 անջնջ կնքն է պատկեն զգործս մարդկան ընդ
 արեգակամբս, և 'ի վեր քան զարեգակնս Հաննէ: Երբանամ
 և գրուածա՞մ է ես ընդ քեզ, ո՞վ
 կորովորանդ Աստիկեցի, զանկեալն քաջու-
 թեամբ 'ի դաշտս Պառնայ և Սալամինայ, որք
 'ի Սարսթոն և 'ի Քերոֆն, և որք նմանիք նոցին
 ընդ ամենայն կողմանս և ազինս: Ճայնակցիմ գո-
 վաբանիցն Հոեաորաց և քերպողաց: չարհամար-
 ճեմ՝ զկամարս կանգնեալս վանս նահատակաց
 Հայրենեաց, այլ առաւել և սրտալիր ևս կամէի
 հոչակել զայնոսին՝ առ որս թէ Հասանէր յեր-
 կրէ աստի հոչակ անուանցն, յաշտար՛ն Հեռա-
 ւոր՝ ուր հողիք նոցա երթեալ զազարիցին: Զի
 եթէ ոչ հնչիցին արձագանգք վայրայն՝ յոր զը-
 նին՝ 'ի ամուսկան Ճայնիցս՝ որ 'ի համար նոցին ար-
 ձակին յերկրէ աստի, ոչ է գործ ճշմարիտ մերս
 կամ նոցայն: Ի զոր ճիշիցին դուտանք և վիպա-
 սանք և ամենայն արուեստաւորք երդոց և նուա-
 գաց և անթօնց որուականաց, եթէ և վանդ մի
 յայնքան ազադակէն որ թնդացուցանէ զքաղաքս
 և զգաշտս մեր՝ ոչ թափանցեալ ժամանեացէ 'ի
 գուտոսն յաւիտեականս, ուր միայն իսկական
 արդիւնք գործոց պատանին և ոչ վարկպարանդի
 կերպարանք... Ահեղածայն հեղու՞մն հողմոյս՝
 խորագոյն աղէ իմաստ, անջրպես անկեալ ընդ
 բերան դուրացն և ընդ ակննցս գովեցելոյն: Առա-
 քինութիւն ևեթ նուիրան և թափանցիկ առ-
 ակացս և հանդերձեւոց: — Ո՞վ մեծարանձք Եւ-
 լադաս Լատինս, և հետեողքդ նոցին, 'ի լուր և
 'ի տես նշանայ քաջոցդ և Հայրենասիրաց՝ զզըր-
 դեալ արփէ և իմ սիրտ... այլ և անդրէն Հան-
 դարտ: Զինչ շահ իցէ ինձ՝ եթէ որպէս զկարեմ

զբայութիւն տալ անդրեացդ կճեաց և պնծեաց,
 նոյնպէս և ոչ ազդիցեմ՝ ինչ և 'ի սիրտս 'ի սպառ-
 սագուս ցամաքեալս: կամ՝ թէ յես վազանցիկ կե-
 նացս՝ ոչ Հանդիպիցիմ նախ անցելոցդ: Բարձրա-
 գոյն և սրբագոյն քան զՄիլեւեան հովնաս ձեր՝
 ինկրեմ ես սեղի Հոգւոց պնուաց:

Ազնուագոյնն և զգոնաւոյնն էն ինձ երկք հեղացե-
 լոյ սրտի, արգիւնք խաղաղակեաց ճարտարաց: ո-
 ւրոյ յառեալ՝ 'ի գեղեցիութիւն բնաբոյս՝ զնոյն ջանա-
 ցին սպաւորել՝ 'ի ասիտակ և 'ի վէմս և 'ի հրա-
 չալս, օժանդակ առեալ անօթս և նիւթս պէս
 պէսս, զոր նախագունից քան զինքեանս ճարտա-
 րաց մուճին հնարագիտութիւնք: և յարմարա-
 կցութեամբ նիւթոց և երանոցոյ՝ ստեղծողք ա-
 նուանեցան ձեռագործայն, ըստ զանպոյն մա-
 սանց արուեստին, որպիսիք՝ պատկերահանու-
 թիւն, անդրիագործութիւն, ճարտարպետու-
 թիւն բնակարանայ և ճանապարհաց գնացու-
 թեանց ընդ ցամաք և ընդ Վուրս: Առաւել սքան-
 չացուցանէ զիս արուեստն՝ ծնունդ մտաց և մա-
 սանց՝ որ բարձրացոյց զպարիսպս, լարեաց ըզ-
 կամուրջս՝ 'ի վերայ անգնդագնաց հեղեղատայ և
 լայնալանջ գետոց, սլացոյց զսիւնս կանգնագեղս,
 թուոյց գմբէթս քարեղէնս յանսոր գմբէթարդն
 երկնից, կոչկուս անհեղեղ քանդակեալ եմոյժ
 'ի կերպարանս կենդանեաց, և զամենայն նիւթ
 զկարծր և զկակուղ՝ լմեալ և տաշեալ՝ ծառայե-
 ցոյց 'ի շինուած և 'ի զարդ: քան թէ պատճառքն
 վասն որոց կանգնեցան կացին հրաշալիքն այն ձե-
 սագործք, ընդ որոց բեկորս և նշխարս համան
 գալք: Զի բազում անգամ ամբարտաւանութիւն
 անձնահաճոյ բանաւորի և ընչէղ հարբասի, կամ
 գորով փոքրոցի՝ հրամայեաց կանգնել զայնոսին,
 թերես և զրկանօք և բուսողատութեամբ: Իսկ ա-
 լուէսաւորն անկամակից՝ իւրով զխուժեմունքն

պատրուակեալ ծածկեաց զնորս անդիտու թինն : Այսօրիկ իցեն ակնեբեազոյն մնացուածք վաստակոյ գարուց և աղբաց անցելոյ, և վկայութիւնք զօրութեան մարդոյս : — Այլ ալէ, սաս, զինչ աւելի քան զքնութիւն յանգիման աւելցեն մեզ և մանրագրուագ անդրիքն և քանդակք, որք կատարելագոյն արարք և մնացուածք համարին ճարտարութեան մարդոյ. և յորվք քան թէ սակաւք վրիպեալք խկ դասնին 'ի բնական օրինակացն, նաև եղծիչք պարզութեան խկատիպ պատկերացն : Երբամտագոյնք և նրբամտունք խկ ճարտարացն, Փիգիոսք և Ասիէէք, Սանցիոյ և Կանովա, ընդօրինակողք ևեթ են և կարկատողք խկիցն կերպարանոց. որք և ոչ սան մի յասանէ շարժել ետուն հոկահասակ անդրոյն կարծեցելոյ ողբամարտիս Արամաղգայ, և ոչ թօթափ մի արտեանանց խաժակն Աթենասոյ. թող թէ բարսխին մի երակաց և միանանց զիցն իւրեանց կուելոց և կոփելոց, յորս ազատաբայլ երթեակն աւելին ճճիք և մժիլք. բայց միայն զի զնուսափու գեղեցկութեան նմար անշուճ և անշարժ աշտղեցան ապաւորել յանհարթ նիւթան, իմաստ ինչ սլացիկ ազգելով 'ի սեսողան, և այն ոչ ամենեցուն զգալիս :

Վէհ քան զճնարգործ ճարտարան ասում զբանագտական, որք արձակ կամ չարիական բառիք 'ի ճառս կամ յերգս և 'ի նուագս յեղին զնկաբուզն բերս և ծնունդս հոգւոյ, գայնկեալ սատարութիւն մտաց և սրտի. և զծածկեալուն կամ զանպիւտս և զանհարբինս այլոյ 'ի մարդկանէ՝ գիւրագիւտ և գիւրահուպ առաջի եզին : Վասն այնորիկ և այնքան մեծք և պիտանիք իցեն՝ որք ընկերացն անկարողաց ծանուցանեն, կամ սարդեալ յուցանեն զօրէնս բնութեան և մտաց և մանուանից զբարուց, զի այսու՝ հօղիս որ 'ի մեզ

զարգանայ, կազգուրի և կեայ՝ անոր ևս քան ըզցեգեղի կենցաղս այս, վերանալով առ ճմարտան :

Գ.

Ճմարտութիւն... ճմարտութիւն : Ահաւասիկ լուծումն մտատանջ առեղծուածոյս. ահաւասիկ կեա նպատակի մարդկութեանս, և կամուրջք յերկրէ յերկին : Սա թռչարան մտաց, ասոյարեղ սրտի, գահոյք և զօրւոյ : Այլ բարէ, քանի խուան են ինդրողքն և գործողք, և որքան նուազունք հասողքն և գտողք : Քանզի առհասարակ վրիպեալս և 'ի զիւտոյն և 'ի վայելից՝ աւսանեմ զայնքան զազմութիւնն կրթեալ 'ի զառածմունս կրկի մարմնոյ, 'ի շահասակութիւնս և 'ի կախւս, յաշխարհակալութիւն և 'ի ստացուածութիւնս, 'ի հրապոյրս արուեստից ճարտարութեան մտտանց և գործեաց. նաև 'ի ճուռմածաւս խոսս հնետորանակ և 'ի նազբանութիւնս ստեղծականս, որովք առաւել վարակին և կաշկանդին միտք և հոգի՝ քան թէ համարձակ խոյանան՝ ուր խոյանալ զրգէ թաքուն իմն յինքեանս աղբուսն : Գործէ շարժեալ և իմաստասիրացն գասակք՝ յառաջողէմ քան զայլն ընթացան յերկեկից ճանաւ պարհի մարդկութեանս, իբրև առաջնորդք և միջնորդք ասմիկ բազմութեանն, գտանել և ջուցանել զճեսու կենաց և հասուցանել 'ի վախճանն մեծ և երանելի : Գործ, մանուանից թէ իղձք ցանկալի և երկոյս գովելի, եթէ միայն յաշտղեալ լինէին, և ոչ օտարոտիս և այլանդակս սերմանէին իմաստս 'ի միտս այլոց. փոխանակ խելոյ զպիտութեանն ինքնաբեր բոյս՝ զմարտութեանց աճեցուցանելով կամաւոր առնկս, կամ խարեալք և խարելով, կամ սեսեալք զնշոյլ

ստուգութեան՝ և չարաչար դանդաջանք՝ 'ի ստուծիւն ստերիւրեալք: և կամ մերձագոյնս ևս մատուցեալ և որ ինչ շուրջ զԾննդարուութեամբ է նկատեալ ընդ աղօս, և պատշաճաբ կիսաբանս, այլ յիսկն անդր ոչ հասեալս և ոչ արտաբերողք:

Իայց եկ բեր գոգլիր, թէ գեղեցիկ գիւտք Այա գեմացւոյն և խորիմաստ վճիռք Ճեմականին, կամ աւանդութիւնք Սոկրատայ և Պլաթարքի, և օրինախոսն պատգամք խմատաստերայ Ճենայ, Հնդկայ և Պարսից՝ յընդհանուր ծառայեալք և բնկալեալք լինելին, որպէս և յոչ սակաւ մասն մի մարդկութեան ցարդ քարոզեալ և ընդունելիք են՝ յեանոցդ օրէք և իրատք. որչափ ինչ յայդ ցանէ շահէր կամ շահի աշխարհս: Ոչ աւանիկ օրդիւն այն լուսաւոր արեւելից՝ սակաւին յետ երից և չօրից հազարայ ամայ՝ խարխախեն 'ի խաւարի անիմաստութեան, զհետ կրթելով հնացեալ խմաստնոց իւրեանց՝ Չրագեշաի, Մանուի, Կոնփուկեայ և նմանեացն, և աստուածախառն էից կամ չէից Բուռայ և Բրաժմայ: Եւ ինքն Զունաստան 'ի պայծառագոյն իւրումս գարու ժամանակի, որ 'ի հինգերորդում՝ և 'ի չորրորդումս հարիւրելի յառաջ քան զմեր թուակա նուութիւնս, յորս ամենայն ազգի ազգի հանձարք մնայ և ձեալս բարգաւաճելն անդանոր, յոր աստիճան ստուգութեան ժամանեալ կամ ժամանեցոյց զմարդկութիւն: Եթէ Սոկրատ մի և Պլատոն բացաբողիչ զԾննդարուութիւն կարծեցան, որքանի բազմութիւնք՝ նոցա զմոնխինդն և զնեցեկոյան պատրաստելին 'ի վարձ: Կաւ մեծն և հօրն այն Հալով՝ կատարող և գայթ 'ի գայթ հետեոյ ամենայն լուութեանց Ելլադայ, զինչ օգտեցաւ 'ի հինգդարեան վաստակոց յունական հանձարոյն՝ առ 'ի կայիպայլ զհամաշխարհական ինքնակալութիւնն, ուղղակիւ կանոնելով զկեն-

ցազավարութիւն միապետեալ ազանց երկրի, միթէ կարոց 'ի բարբարոս և 'ի սինչքոր խուժանե անտի հիւսիսոյ և արեւելից՝ աներկեան պահել զգորութիւն և զպատիւ նախահարց իւրոց: Կարոց մանաւանդ՝ 'ի իրժադոյն ամբօրէ մոլութեանց՝ զերծուցանել զբարս ժողովադեանն. ոչ խաղալիկ և սարուկ և սպանդ ելլէ՝ առաւել քան օտար ազանց և զնեցեց՝ իւրոց ընդաբոյս ընտանի աստից և մոլութեանց: Եթէ Պլատոն և Չէնոնք չկային հուս առ ընթեր իւրոցն, միթէ պակաս ինչ մտահասք էին սկանառեպն Կատոն և Կիկերոն, Սենեկա, Տակիտոս, Պլինիոս և Կուրնալ, այլովքն հանդերձ. ոչ և հելլենական փիլիսոփայիցն մտանեք՝ 'ի բնիկ և 'ի լատին լեզու՝ առ ձեռն պատրաստ կային, ոչ ճորք քան զնոսին՝ փորձ հազարամեայ դարուն՝ մերկապարանոց կայր յերեանի: Մի ըստ միոյն զպատին և զժրանիս յափշտակելով յարեան Կեսարն և Աւգուստոսը, վանել զաստապաղոս սահմանաց արեւելեական պետութեան, թաուցանել միւսանդամ զարծուիս հոսմեականս 'ի ծաղս ծանուցեալ աշխարհաց, և յաջողեցան շատ կամ սակաւ: Իսկ ընդէր ընաւ չեկայ չերեկցաւ որ, ոչ յայնժամ և ոչ յառայն, որ ասէր աշխարհալուր և համարձակածայն. Եկայք ամենեկեան զհետ իմ կամ, Երթայք ընդ այս ճանապարհ՝ զոր բանամս, և հասցիք 'ի կէսն կենաց. օն, արարէք որպէս ես՝ և կեցնիք յախեանս: . . . Ո՛հ, ո՛հ. փոթորկն աշխարհածուփ լուցուցանե և զհրաշաճառութիւնս Հելլենաց և Հուսոց: Ամենայն սրահք և Լարանք փիլիսոփայից և մոլուց և բրմայ՝ հանդոյն մահարձանաց և պարսպաց բնաւոր թագաւորացն՝ ստապալեալ զնին 'ի լուութիւն և յարհամարհանս. և որբտացեալ յանապատի կենցաղոյս ձայն հորմավար՝ փէ՛ւ և գո՛ւց զունայնու.

Թիւն գործոց և բանից ազգաց և լեզուաց, հօ-
րաց և սկարաց, դիւանոց և անդիւանոց. անցանէ
գնայ և դառնայ, և նոյն հնչէ հանապաղ հաչակ
ուռայնութեան:

Յունայնութիւնն ուրեմն հաստատեալ իցէ
մարդ. յերեւել 'ի վերայ երկրի առ վայր մի և ան-
ցանեւ 'ի ազառ, յանդիւս կորուստ ժամանակի:
Ս'ն անգր, 'ի բաց մարտ: Չէ մարթ կորնչել այնմ՝
որ 'ի դիւս ձկանի մայրն. անմարթ է քքանալ՝ որ
մտաբերեաց 'ի յաւիտենականն, կամ վրիպել
յուսացելուսն 'ի գեղեցիկն և 'ի ճշմարտ: Եւ-
թէպէտ շատ կամ սակաւ յերկրաւորս և յան-
ցաւորս զբազեալ և վարակեալ մուրեալ զան-
գաչէր, սակայն ձայն ներքին, նոյն ինքն ձայնն
քարոզ ունայնութեան կենդանոյս՝ անդու ազգ
առնէ նմա զխնի, զանանցն, զհամբերձեալն: Այն-
նայն խկ արարածք եղծանելիք՝ զանեղծն քարո-
զէին և քարոզէն. խոտ և մուշայ վայրի, ծաղիկն
լինանային և միզ մորեկուոյ, որպէս և մարդ ի կեա-
նանու, աստեղք երկնից, սղնայտք Սլաւոյայք և
մկանունք ուկրինան, մէն մի առաք էն յոգիք բա-
նին կենաց և ծանոթութն Անեղին: Եւ զի պէտպէս
կիրք և կարծիք, զբազանք և զառանցանք դերեցին
զմտտ բազմաց, 'ի թանձրութեան ինն բմբռնեալ
միջի, յորում զանդաչցին բովանդակ դարք և
սոճմք աղանց, զհարձ հանդուրժէր Բանն մշտն-
ջինաւոր՝ հրաժարել 'ի սպառ 'ի հրաշակերան ան-
տի արարածոյ իւրմէ. մարթ ինչ էր անաղտ լու-
սոյն՝ չհերձանել զկաւար աղիտութեան՝ գէթ սա-
կաւամասնեայ ճառագայտիւք: Գիշեր սնասաղ
ոչ տարածեցաւ երբէք 'ի վերայ համորեն մարդ-
կութեանս. ճշմարտութիւնն ոչ երբէք խաբանե-
ցաւ կամ զանխուլ մնաց յառհասարակ երկրէ-
այլ աղտ աղտ ցորայր և փայլէր մերթ յայս և
մերթ յայն կողմն, կամ նշանօք և երկնային երև-

մամբք, կամ քարոզութեամբ արանց զգաստից,
և կամ տառաստպական նոցին բանիւք:

Վէհադոյն 'ի սոսա հանդիսացեալ առաջնորդն
եբրայական ազգին՝ յամայութիւնս Արեւոյ, նախ
առաջին գործմէր 'ի ասխտակս և 'ի սրկալն տեռ-
զականս՝ բանս ճշմարտաճառս. կակալն այն լե-
զուաւ և հրաշարանն քան զամենայն ճարտասան,
բանաստեղծ, վիպասան, օրէնագիր, մարգարէ և
իշխան. զամենեցուն զոտոս ունեւրով շնորհս՝ և ա-
ռաւելեալ քան զամենեանն, ամենայն գովու-
թեանց արժանաւորս և անմասն այրն Մովսէս,
որում հետեոյ գտեալ հոգեկիր արանց՝ Տեսողք
և մարգարէք կոչէին ցամա հազար: Սակայն և
սղբա և նոս ինքն եւսամեծն նախամարգարէ՝ ոչ
բաւէին առաջնորդ և ձեռնառ լինել, բայց փո-
քու գրոհի միջ մարդկութեան, որգուցն Իսրա-
յէլի. և այն գայթ 'ի գայթի հազիւ ընդ հնգեա-
սան դարս բուծանելով զառկայծեալ ճրագն ճըշ-
մարտութեան. մինչև նոյն ինքն հեղինակն հաւա-
տարիմ գարութեց, որ զգալն տաքն հետս զԱ-
սուած 'ի թիկնաց, և իմանալօքն խորամուկ եղև
յիմանալի գէմս ստտուածութեան, — նոյն ինքն
իրպէկ լեալ, զի թէպէտ և հասու լինի ճշմար-
տութեան՝ այլ ոչ բովանդակող, և անկարող 'ի
խելամտեցուցանել զմերձաւորս և զհեռաւորս, —
վիպեաց զի գրեալօքն ի քան զինքն Անձին միայն
էր կարողութիւնն առ այգ. սացց բայ, Յարկցէ
Մարգարէ վէհադոյն 'ի ժամանակի իւրում, և
նմա լուկիլք. 'ի նմանէ ուսմբք զկասարեան ճըշ-
մարտութիւն:

Նշովեցան զարձեալ դարք զանդաղք. յա-
րեան մարգարէք յԻսրայէլի, երևեցաւ Բեդգա-
հեմացին հոգեբնար. սաղմոսաց բանս փափկա-
գոյնս քան զամենայն մարդոյ. բարձրացոյց նա
զհօգի, խորացոյց զօրս, և ելց զերկրկեայ ըլ-

մայմամբք գուշակեաց՝ յերմէ շառաւիղէ զծա-
 գունն նախագուշակելոյն ՚ի Մովսիսէ. և ապա
 անց դեաց առ Հարս իւր: Յայտնեցաւ և թեզ-
 բացին նախնածայցը, և որպէս ճարտարապետ
 հրոյ՝ փէշաց բանս բորբոքիս, շանթեաց յանլը-
 սալսն. և ոչ հանդուրժեալ զինտարածիցն՝ լծեաց
 զկառան և զերթիարս հրեղինս, չուեաց ՚ի գա-
 ւառս անծանօթս: Եկն և որդին Ամովսայ ՚ի վիա-
 յութիւն կարգալով զերկինս և զերկիր. բարբա-
 ւեր բանս բարձրագոյնս և ամենազարգս, և յա-
 պառուժ արանց միջնկառուր եղեալ՝ խափանէր:
 Գայր և ոլբասայելին Երեմիաս՝ գորովական ձայն
 արկուծեամբ խանդապատել զընկի և զօտար.
 և անհամբոյրք բարեոյ ՚ի գուբ և ՚ի մահ գառա-
 պարտէին զնա: Յառաջ մատեաւ և ցանկալի այրն
 Դանիէլ, և վաղվաղեաց վիայեաց, զի ոչ ինքն և
 ոչ առաջնիք ոչ վերջնիք ՚ի սեսոզաց՝ բաւական լի-
 նէին ՚ի կանգնումն և ՚ի կենդանութիւն հոգւոյ.
 այլ մին միայն որ գաղտնի էր յետ եօթանասնից
 եօթնից ամաց. և յուսով սպասեցոց զցահանեալ
 մարդկութիւնս՝ այլ ևս գարս բովանդակ:...

Արագեացէնարք ժամանակ. բարձից կրճիմն յու-
 սոյն, փարատեացի քօղն և երևեսցի Ճմարտու-
 թիւն բացադէմ, որպէս արեգակն ՚ի պարզութե-
 սուրբնէնի: Ել, երևեաց և զու, անկիալալը ՚ի
 սկզբանէ գարուց. յայտնեաց զբեզ աշխարհի, և
 կեցցեն մարդիկ: Ելն լրումն ժամանակաց, և ե-
 հաս կէտն նախանկատ:... Ահաւաղիկնա. նշմա-
 րեալն այն ՚ի սեսոզաց, հեռատեղայն ՚ի նահա-
 պեաց, խոսասցեալն նախամարդին, և կարօ-
 սացեալն յամենայն մարդկութենէ: Ի գեղջէ
 փոքուէ Պաղեսաբնացոց, ՚ի հանդրուանաց հո-
 վուաց, և յաղվանէ միովէ յանծանօթէ, բայց ՚ի
 քաջածանօթէ երկնից ՚ի յաւիտեանցն, որպէս
 ծաղիկ մի պայծառ յանթիմ ծղօտէ հովտի ուրիք

մենաւորի, և որպէս ասող մի լուսաւոր յոնամայ
 միջոցէ մթապատ գիւրեոյ, կամ արեգակնիզ ՚ի
 կցուածոյ ծովու և երկնիս, անձայն և անշունջ
 հեզապարելով ՚ի վեր ելանէ, և համասփիւռ ճա-
 ւազայթիւքն ընու զմեջ երկնից և երկրի: Զգաց
 համբէն մարդկութիւն զօրութիւն կենսածիր. և
 զիտայ՝ զի ոչ հոգբ և ոչ իմաստունք, ոչ գեղա-
 նիք և ոչ մեծատունք՝ յորս երբեմն յուսայր, ոչ
 էին բաւական ՚ի բժշկութիւն սրտի և ՚ի կեանս
 հոգւոյ. և սեսանողք անգամ ոչ բաւէին թափ
 անցանել ՚ի կիրս և ՚ի ցուս՝ որ ՚ի խորոջ անդ,
 ուր միայն ամենատեղին հասանէր ակն անվրէպ
 և ձեան հրաշագործակ. և այնպիսի էր որ գայրն
 և եկեալ իսկ էր յայցելութիւն ինքեան, Յիսուս:

Դ.

Յիսուս. ահաւասիկ անկիալեալն ՚ի մարդկանէ,
 և անկիալու մարդկութեան. զի իւր իսկ ստեղ-
 ծուսն և ստացածն էր մարդս. և նա միայն գի-
 տէր քաջ և զպէտս մարդոյն և զգարման պիտոյն-
 ցն. զոր ընդ ազօտ միայն նշմարեալ գուշակեցին
 մարդարէքն Բարայէլն, և ազօտագոյն ևս իմաս-
 տունք հեթանոսաց և օրէնալիք արեւելոց. և ոչ
 բաւեալ ամենայն յօգակապ բանիւքն բայտարել,
 վիայեցին լոկ միայն թէ հարկ է լինել բան կեն-
 դանի, այլ զորպէսն ոչ իմացան, մինչև ինքնին
 « Ճմարտութիւնն յերկնից երևեցաւ », ըստ նա-
 խածայնութեան Դատթի, և բուսեալ յերկրէ
 սաց զանձեկն, « Ես եմ Ճմարտութիւն »: Յայն
 ժամ լուեցին և սեսանողք և Պատանք, և պա-
 տանեակ մի ձկնախոյզ՝ կարկառեալ հիանալի համ-
 արձակութեամբ՝ յամենայնքանց լին, որ մարդկ-
 օրէն անօրինէր ընդ նմանիս իւր, խղիւս արկա-

նէր զգրգով զերունանի գգուելւոյն, և վիայէր և գոչէր, և թէ, « Տեսաք, և ձեռք մեր ջջափեցին (« Ի վերայ Բանին կենաց »), և բարձրագոյնս ևս վերագոչէր, թէ « Ի սիրբանէ էր Բանն, և Բանն (« էր առ Աստուած, և Աստուած էր Բանն... (« Եւ Բանն մարմին եղև և բնակեցաւ Ի մեզ »):

Ո՛վ սրանէլի սնորորութեանս՝ զոր զգամս այժմիկ: Չ՛հարգ խաղաղին խռովք կրիցս յուզմանց. զի՛ հեշտաբար սատանի սիրտս տագնաւտեալ: Ո՛րպէս յանկործոյն ցածեար բռնար, հողմք սասակագոչ, ոչ ևս կոծեա զականջս իմ՝ խառնածայն և սրտաբեկ մոնջմամբդ: Ոչ ևս ծով խեթիեալ Ի սուր փրկեացք կոհակաբոծ խորխորի, բլուրս բարձրացուցանելով և անդունդս ինուցանելով, և ոչ սարաբատակ միանալիք զգեստաւորեալ վաղվազէ խաղայ ձեմիլ յոճալ յափունս պակուցեալս, և ոչ որպէս այսակիրք կամ յուսահատք յայս կոյս յայն կոյս գանդաչէն կողերք եղևնոյս, և ոչ երեւք մարդագեանոյս Ի մահաւասար շնչմանէք տագնապեալ թուրի թողուլ զյաւտական և փախել: Այլ ի՞ր հեղաբար համբուրին ծիլք և ծաղիլունք, ոտք և աերեք, ծով և աւազ, օգք և գեանիք, երկիր և երկինք: Արտաքս յերաքանչիւր դարանայ և պատպարանայ ելեալ աղքատք կենդանեաց՝ յօգս և յերեսս դաշտաց, հանդէս առնեն բնատուր հրահանգաց կենաց իւրեանց: Ահա հեղապար պատգամաւորին նկարած և թիթաւունք Ի թեթիւ թփոց. ահա ձեպի մեղուն ժիրաժիր Ի վատանին անուշարար. ամենուրեք խայտան բզղեն միջտարք. լւելի լինին ձայնք ոստանիստ հրեշտակաց Ի թառակ պրակաց և անտաւաց և Ի սրբոց քորանձաւաց: Համաձայնութիւն իմն անորբարեր նուագաց հնէ յընդհանուր բնութեանս: Երթեալ ասպ հեռասցի և

հանգիցէ խոնջեալն և խոնջեցուցիչ չորմն ահաւոր: (« Արի հիւսիսի, և եկ հարաւ »): Պատանձեաց և դու, սրտատարուս ձայնդ բարբաւոյ յանապատի որ գոչէիր և գանջէիր, և թէ « Ամենայն մարք (« մին խոտ է »), ամենայն աղք մարդկան որպէս խոտ վայրէ՛ որ կոխան եղև, և որպէս ծաղիկն որ թօթափեցաւ: Կո մահաւանդ գոչեա միանդամ ևս, և թէ Ամենայն անցանէ, (« և բան Տեսան մնայ (« յաւխեան ») . և ապա կարկեաց և լուս լեր:

Քանզի լւելի եղև ձայն ցանկալւոյն աղանց և դարուց. ձայն հեղ և հզօր որոյ ճշմարտութիւն՝ հաստատէ զշինունս երկրի, և խաղաղութիւն՝ ցածուցանէ զաղմուկս սրտի. և հոգի մարդոյս նովաւ նշմարէ զաւելի իւր յերկեկից ճանապարհակցութեան կենացն: Ամենայն ինչ գամ մի վեր Ի վայր յուզեալ հանգարտեալ հաստատի յանկարծակի այլակերպութեամբ, և Ի վերայ ամենայնի փայլէ կնիքն Քրիստոսի: Չիք որ պստահեալ և չիք ուրք գեղանի և պիտանի, կամ հզօր կամ հանձարեղ թէ՛ թէ ոչ անիցի զնոյլ շնորհաց Յիսուսն: Յոր ոչն իցէ հարեալ բեւեա արեղերակեցոյց նորա ձեռին չէ մարթ չէ հնար նմա կալ հաստատուն և անվրէպ: Ար ոչ աւգէ յաստուածամարդոյ անտի զնիշնորդութեան՝ զհնութեան անի կերպարանս տակալին, և վախճանի յապաւկանութիւն: Խեցի և խորխոր վաթսուհկանգնեան անդրոյն Կարուքայ, և ճճիք ճարակին զմէջ գեղայնոյ դարեհեանն Բահաղու: Ընդ ամենայն երանքօք սիւսեալ կայ մթացուցիչն. ընդ ամենայն գեղով տգեղիչն, ընդ ամենայն յորինուածով՝ եղծիչ իւր: — Միահեծան արխարհակալեւ կարծէ Աւգոստոս Հոկաուիստ, և փակէ զմեհեան Յանսոի՝ զխաղվիցն նշանակ. մինչ ընդարձակալոյն ևս բունին զրուռք սաճարաց Աստղեկան, և գարեւելքերցն և եղբարց, հեղինակաց մուտթեանց և

պղծութեանց: Ի զուր ճգնին Կեսարք քառասնիւք բիրտօք լեզուներսումբ զորաց, պրետորօք և հիւպատօք՝ յապահովել զմզարձակեալ սահմանս ինքնակալութեանն. Ի զուր ջանան՝ որպէս յանթօ մի մեծ ունկուռնս արկեալ կապել կաշկանդէլ զաշխարհ, որ որպէս զնգալի մի լպղծուն սահեալ զերծանի յարեւելուռնս նոցին ձեռաց: Զյետին ճգնն Սերիլոսք, Տակիտօք և Կրիսկեաք, վերջին հռոմէացի զորավարօք և վերջին յունալաալին իմաստասիրօք, և երթալով վրէպի հեռանայ Ի նոցանէ և պետութիւնն և դիտութիւնն: Ամբոսի շա ապարանք Կեսարոսց զզրգեալ տապալին. ամենազորն Հուսով՝ և ժողովուրդն արքայական՝ զմահաւ պատերազմն փորձէ ընդ վայրագառուն բնակչաց արեւելից և հիւսիսոյ, յարձակելոց սպլ լելոց Ի ճամբարապատ սահմանագլուխս և յաշխարհամէջս խկ իւրեանց, և պարտասեալ լքանի. մինչդեռ ձկնահանք Գալիլեացիք և խորանախք Տուրաքիք՝ երթեալ զընեն զտաղաւար իւրեանց առ սեմօք աշխարհամուռա զրանցն: Արքա կործանել և հոլովածալ զնին, և երկնագմբէթ ամբառնայ կանդնի կայ տաճարն Պետրոսի ձկնորդի, վհագոյն և մեծազոյն քան զամենայն շինուած երկրաւոր, համահաւաքել անդանոր յամենայն ազգաց և լեզուաց, որպէս տիրաճիւսակ ցանցիւ որտալով այնուհետեւ զմարդիկ Ի կեանս: Այ Կիւրոսի և ոչ Կեսարու, ոչ Աղեքսանդրեանց և ոչ Բսելքքոսայց, այլ Յիսուսի միայնոյ տուեալ եղև ամենայն իշխանութիւն՝ յերկինս և յերկրի. և ոչ Պիւլթագորք, Սոկրատք և Արիստոտէլք, այլ նա միայն կարաց ասել, « Ես եմ ճշմարտութիւն »: « Կնացեք այստե՛հետեւ, աշակերտեցե՛ք զամենայն հեթա՛ստս... ուսուցե՛ք նոցա պահ՛ել զամենայն՝ որ « ինչ պատուիրելի ձեղ: Եւ ահաւաստիկ ես ընդ

« ձեղ եմ զամենայն աւուրս, մինչև Ի կատարած « աշխարհի »: Եւ թէ, « Երկինք և երկիր անցնեն » և բանք իմ ոչ անցանկէն »: — Այ ևս զարմանամ էթէ յայսպիսի վատահաճայն բարբառոյ՝ ապշեալ ասի Ի բերան լինին համբերէն կաճաւք իմաստասիրաց, և թէ Աթէնք զզրդին, և մուգայք թանգուղին, և որբոսացեալն Ոլլեմպոս՝ հոլունեալ հարթայառակ լինի. զգորցք զգպրոցս, գարք զգարս, աղքք զազգս, պետութիւնք զպետութիւնս փոփոխեն, երկիր կերպս Ի կերպս լինի, երկինք այլազուռնին, և բանք Յիսուսի կան և մանս անփոփոխք անայլայլալք:

Ով անձն բանական, որում արժան խկ է սիրել և վարել բանիւ, եկ, տես և սքանչացիր ընդ գործս այս և ընդ գործսն: Եկնայք իմաստունք և իմաստակք, հաւատացեալք և անհաւատք, քրնչեք և զարմոցաւորք, և թէ զորպէս՝ յորմէ հետեւ երեւեցաւ Յիսուս, այս սուղ ինչ պահաս 2000 ամբ են, ամենայն ինչ որպէս զառաջինն յեղչեղեալ չըջանալի, և նա միայն կայ անկողի, որպէս Ի կենդրոնի հանուրց, Ի վարդապետութեան իւրում և յեկեղեցւոջ: Այս 19 զարբ են, ոչ յովա մի օտարացաւ յաւետարանէ անտի նորա, և ոչ օրէնք մի խախտեցան յուխտն որին. այլ մանուսանք ամ ըստ ամէ ընդհանէ վարդապետութիւնն նորա և հասանէ Ի ծագս տիեղերաց. կտակարանք նորա խորտակին զկոհակս ամպարչուութեան, և նահանջարեկ անելի տանս սեթեւեթեալ ստուծիւնք անուանեալ իմաստասիրացն: Աճելով աճեն ժամանակք և ամենայն պէտպէս ծնունդք նոցին, և ինչ մի նորահրաշ իրբև զայս՝ ոչ երեւցուցանեն, ոչ մեծ և ոչ հաւասար նմին, և ոչ բաւական առ Ի կլիլու դալոյ՝ համեմատութեան. և ոչ խկ որչափ քոս կուռեալ Ի կոճեղ եղևնոյս՝ ընդ մեծի բարձրու-

Թեան սորին և ընդ տարածութեան: Լինն արդարև տակաւին բազում բռանց և խմտանոց և ճարտարաց անուանիք՝ զերծեալք յարեաց ժամանակի, որպէս ՚ի մեծն նաւարեկութենէն. այլ այն ամենայն զինչ իցէ առ հաշուաւ անուան Միոյս այսորին. ոչ ապաքէն « յանուն Յիսուսի՝ ամենայն « ծունր կրինի, երկնաւորաց, երկրաւորաց և « ասնգարամետականաց »: Ար հաւանին՝ ՚ի խորս հոգւոյն սպաւորէ զանունն այն. որ ոչն հաւանի՝ ոչ կարէ խաղաւ ջնձիկ յոգւոյ իրում: Չայն աւնուն պաշտէ բարեպաշտն, մերժէ ամպարիշտըն, երկբայի Թեթևամիտն, ՚ի քրայս քննութեան արկանէ փխլտափայն. և նա կայ մնայ անտեղիտալի յամենայն փորձոյ, ձեռք ամենեցուն ՚ի նա, և ձեռն նորս յամենայն: Այլ որ ընդունին և ընդգրկեն՝ յաւելցէ ինչ « Ոչ և ոչ որ հրթարէն և հակառակին՝ նուազեցուցէ ինչ առ ՚ի նմանէն. այլ ոմն ճշմարտութեամբ և ոմն ստութեամբ՝ վկայք են նմին. և ոմն օգտի և ոմն սուժի: Մագէ որպէս զարեգակն, և առաւել քան զարեգակն անթմար լուսով ընդ ամենայն տիւղերս. և ոչ որ է որ կարիցէ հակառակել նմա՝ Թեպէտ և պաշս իւր կախուցէ: Կիւրին իցէ խաւարեցուցանել զտին սուրնջինի, այլ և ոչ նշալ մի ՚ի նշուրից շնորհայն Յիսուսի՝ նուազեցուցանել:

Ի՞նչ արդ ուսայի է Յիսուսի՝ այս զօրութիւն, — հարցանես սիրտ յեղելուզի, — կամ ո՞նեա գմա զիշխանութիւնդ զայդ: Ի՛նչ և զխորդ Յիսուս, և միայն Յիսուս, անօրէն աշխարհի և բազդակնիլք մարդկութեան. և ոչ որ այլ, ոչ յառաջ քան զնա և ոչ յետ նորս: — Ար հաւատայի եթէ նա էր Բանն որ ՚ի սկզբանէ՝ նա բնաւ ոչ երկմտի. Թէ « Ար « ՚ի վերուստն գայ՝ ՚ի վերոյ է քան զամենայն »: Թէ հրաշալւոյն՝ հարկ է հրաշալւն գործել, ճըշմարտութեան՝ զճշմարտութիւն և եթ բոլսել,

որպէս լուսոյ զլոյս և հրոյ զհոբր: Աստուծոյ միայն է զաստուածայինս գործել: Եւ զինչ աստուածայնագոյն քան զկանգնումն անկելոյ բնութեան մարդոյ: Ա՞՞ ՚ի զգասակցն առաջնոյ ոչ վրկայեաց՝ եթէ ապականեալ էր սիրտ մարդկութեանս. և ո՞ ՚ի հանճարեղաց ոչ խոտտովանեցաւ զպարտութիւն ՚ի զիւտ բժշկութեանն. ում այնքան երկար գարս սպասեալ մնային հոգիք նահապետաց և սիրտք երկիւզածաց. կամ յէր վերայ ժամանակքս նորք և զգոնագոյն տղինք հիմնեալ կան՝ այսքան անբաւ մտանելիք, արձանօք, նշանակօք, որ սրբագոյն և աշուտագոյն են քան զամենայն զպրութիւնս հէթանոսաց, և հզօրագոյն քան զամենայն սին և հիմն առ ՚ի բաւնալ զմիտս և զսիրտս առօրէն և անստօղջ: — Եթէ տակաւին անհաւատ ումքք Թուրից այդ ամենայն, ոչ հնչելցեն սկանջբն ՚ի մշտամուտնջ բողբոջ բնութեան մարդկութեանս, որ ողբալով զվերսին յերանունութենէ իմքք, և խոտտովանելով զայլայլութիւն զգալուածոց սրտին՝ որպէս զնաւնարանի ջարի և բարւոյ, բժշկութիւն և ազատութիւն խնդրէ յինքնաբոյժ ախտէն: Եւ դու ինքնին, սվանձն, ոչ զգայցես ՚ի ներքս ՚ի քեզ զխանութւրդ և զնոսով: Առաւել վսեմութիւնդ այդ՝ որով յաւակնիրս երբեմն գերմարդկային ոմն զքեզ կարծել է ՚ի բարձունս ճախրել, և նուաստութիւնդ՝ որով քան զանբանսն իսկ վայրբարեալ զեղևխ յանպատաշածն: Զինչ այդ այլադեմ մըցանք միտաց և ամօթոյ ՚ի քեզ կարիցես խաբել զգիրտակըցութիւնդ: Այ՛ մանաւանդ ՚ի գոյն էն սրտիդ բնութենուցոս զսիրտ համօրէն մարդկութեան, վերաւոր և վարակեալ պէսպէս ախտիք. և համօրէն մարդկութիւն ոչ ճանաչիցէ և զքեզ խաղալիկ կրից կամայից և սկամայից, որպէս զերբանչելւոր որ ՚ի կանանցածնաց:

Իսկ եթէ առհասարակ այսպէս կարելիք եղծ զեղծ գնէր մարդկուծիւն, չէր սարս չէր արժան փափագել բժշկուծեանն. որ եթէ այնքան երկար ժամանակ չյաջողեաց նմա, յայտ ուրեմն է զի չկարէր անձամբ զանձն դարմանել և կանգնել. վեհագունի ումբ կարօտեր ստարուծեան, մանաւանդ թէ զերարուն էուծեան. զի որում Սոկրատք և Պլատոնք, Արքաճամբ և Մովսէսք չկարային լինել յարուցիչք, ինքեանք իսկ ոչ անվերք և անարատք, չարի էր այնուհետև յարարիչ անգր մարդկուծեանն լինել ապաստան: Բայց տես ինձ, զի թէպէտ և արտաքուստ 'ի վերուստ խնդրեցաւ բժիշկն, այլ գեղ զարմանոյն՝ անգամին 'ի նմին իսկ 'ի մարդկային բնուծեանէս կազմեաց. զորօրինակ որօրիսկ իայծիւ ձկնեայ զձուին որսայ, այսպէս և Աստուածուծիւն 'ի վերաստանալ զմարդն՝ զնորին բնուծիւն իայծ արարեալ յանձն Բանին և 'ի կարծա խաչին, որսացաւ զձեռակերան իւր գեղեցիկ՝ յախարհակուծածակ կենցաղոյս: Բարեւ. Աստուած թափեալ խառնեալ ընդ մարդկուծեան, և մարդկուծիւն վերուեալ յանմատոյց խորս մբշարնինաւոր էուծեանն:

Այլուժես խոնարհել հաւանել՝ զլուխ ամպար հուսած, բողբաղեալք փիլիսոփոս, և ծաղր առնես զայնքան հուսատեք և փեղերագրուս աւետարանուծեամբ միոյն Յիսուսի. իսկ քո պանծացեալ իմաստասիրուծիւնդ՝ քանի՞ զըք հաւանեցոյց յամենայն արեւ մտաց, և մանաւանդ քանի՞ հոգիս հանգարտեցոյց անխղճ և անխուով: Համարիցիս ունել ճեակողս աղատական մտարբուծեանցդ. գիտիցես արդեօք թէ որպիսի՞ ունիցին և վարս. ո՞ր իցին գասք առաքինադործ անհաւատիցդ. ո՞ր կաճառք սրբազանից՝ նոցին, որպիսի՞ սքանչելիք արարոց նոցա. քանի՞ ինչ իցեն

վկայքդ արեամբ կնքեալք զբարուք խոստովանուծիւնն իւրեանց. ո՞րքան վարդապետք և քահանայապետք դաւանուծեան ձերոյ: Արիցես ցուցանել կամ ունիցիս զմանկս այնոցիկ՝ զորս դասագաս յանգիման առնէ Եկեղեցին Յիսուսի, իբրև քահանայապետս, վարդապետս, տեսուչս, քարոզս, վկայս և նահապակս՝ արեամբ և մահուամբ 'ի վերայ հաւատոցն նուիրեալս. նահապակք՝ որոց մէն միոյ արալք գերազանցեն զհաղաներդևլք զիւցաղամբք. բերողացն: Արածիցեն թէ այդքան բիւրուսորց պատնց և կանանց՝ յամենայն հասակէ և յամենայն դասակարգէ, և յայքան երկայն դարս, այնպիսի մաքուր վարս ունելով, և այնչափ գիտուծիւն և գպուծիւն, մաքրեալ իցեն միտքն, և ապուծեամբ զանձինս մասնեալ յանագորոյն չարչարանս և 'ի մահ, և քո և նմանեացդ միայն խեղք՝ առողջք և պայծառք մնացին: Այլ մեծապանծ կատարելուծեանդ յոր հասէք, այդքան անշան և զիւրագիւտ հեարիւք և կամայական մտածուծեամբք, չստացից թէ յաճախ և սյգքան իսանակ վարուք: Եւ սակայն տակաւին չտեսանեմ որեք ակն յանդիման հաստատեալ զուխտ ձեր և զմիտ բանուծիւն. ոչ ուրեք յիշատակարանս մեծամեծս զործոյ անհաստուծեան. ոչ մի նշան երևելի զյաղթուծեան և զյաջողուծեան սկզբանց իմաստից ձերոց, զի եղից օխոյեան ընդդէմ՝ նշանին Քրիստոսի. այնմ՝ որ ամենայն ուրեք կանգնեալ կայ և երևի համարձակապէս, և զամենայն կանգնէ և կնքէ. նշանն Քրիստոսի, Խաչն ամենափրկիչ:

Եւ սակայն տակաւին չտեսանեմ որեք ակն յանդիման հաստատեալ զուխտ ձեր և զմիտ բանուծիւն. ոչ ուրեք յիշատակարանս մեծամեծս զործոյ անհաստուծեան. ոչ մի նշան երևելի զյաղթուծեան և զյաջողուծեան սկզբանց իմաստից ձերոց, զի եղից օխոյեան ընդդէմ՝ նշանին Քրիստոսի. այնմ՝ որ ամենայն ուրեք կանգնեալ կայ և երևի համարձակապէս, և զամենայն կանգնէ և կնքէ. նշանն Քրիստոսի, Խաչն ամենափրկիչ:

Ն.

Բազում անգամ նստեալ իմ 'ի սարս գաճաւանդեալս 'ի վերայ ընդարձակութեան դաշտաց և ծովուց, կամ 'ի բլեր ուրիշ մենաւորի, որպէս և 'ի Ժամուս յայսմիկ, սրբէմ շուրջ յաւեալ նըկասել զարդիւնս բնութեան և զմարդոյ: Լերինք բարձունք յայս կամ յայնմ մարդէ կանգնեալք մի բաւ միովէ՝ խափանեն զմասն աեսարանին, որ և սակաւին այնպէս անբաւ թուի ընդարձակութեամբ: շարք բլորոցս որ 'ի սնարից կուսէ կարաւինաձև բոլորեալք՝ որպէս մահիկ սրակիչ յստակ ճակատու, խոնարհեալ յանպին 'ի հովիտս լայնս, գոգս, զորս կամարակերպ չըմպակիեն ոլորտքն բիւրեղանմանք: և 'ի կիցս խառնուածոյ երկնակաւսոյց գմբէթին ընդ հարթայատակ գետոյս՝ նշմարի ծիր լուսաշուք, գոյնք ցուցակ անծայրածաւալ ծովուն, որ առաւել քան զառաւել ընդարձակեցուցանէ զտեսիլն և ձկնացուցանէ զմիտս յանհասանելիս աշտց սահմանս: Այլ շատ ինձ են 'ի զբօսանս աջաց և 'ի զմայլումս սրտի՝ բովանդակութիւն իսկ ձորագաշաակին զեսեղեղոյ ընդ մէջ լերանցս և ծովուն: մերթ երևեալ որպէս սրահ մի մեծ և բազմաթան ընդ կապուտակային ձե՛ղուամբ, որ ամբ՝ սպիտակագէղ և լուսակիղն ծրարք ամպոց՝ որպէս շաբրուանք և որահակք ծածանեալք 'ի վերուստ՝ հովանի առնեն շինից և սպարակաց: և մերթ ծով իմն ցամաքանիւթ՝ կանաչաթուռի կոճակօք կաղամտիտաց և եղևնեաց և պաղարբեր պուրակաց անընդատեղ ընդ մարդաբնակ ոտանս: Բարձրակաւոյց՝ զանդակատունք յերի սպիտակորմն եկեղեցեաց՝ երեկն

իմն առաջաստք փարեալք 'ի կայմս բարձրաձագկս՝ որ վարեալ տանիցին տորմիցս մեծակաղմն նաւուց, և հանգրուանք իցեն նոցին՝ մեծանխատաւանքն և աշտարակազարդ քաղաքն բացական: և հունք նոցին հատեալք՝ սպիտակահաճեա երկարութիւնք շահահաճ պուրասայից: Եւ որքան գեղերիմ յայսպիսի կարծիս՝ այնքան ճշգրտագոյն համարիմ զերևոյթն: և թուի իմն թէ այս ամենայն ձեռակերպ մարդկան՝ ցիր ընդ երեսս գաշտին, կամ գաշտս բոլորովմբ՝ շինածոյն և տընկածով, սաղապաձնէ՝ նաւեալ խաղաղք 'ի ծով մեծածով, յաշխարհ հեռուս, յեղս անծանօթ:

Խորհիմ ընդ պիտակս յոյզ և շարժանուն ձեռաց և սրակ մարդկան սփռուլոց յայդքան ընդարձակութեան շէն և անշէն վայրաց, որք ընդ սեսութեամբս բովանդակին, և յորոց ճիկ մի ոչ հասանէ յունկն իմ, իմանալ գէթ առ սակաւ մի զինչ անգր 'ի նոսայն գործիցի և կրիցի: Եւ ոչ կարելով յաղթել փոքրուս (որ մեծ իսկ է), յեսս մեծագոյնն ձկաին միտք իմ, յայնիոյս պարուց և պատուարաց լերանք, որք սահման հատեալ գաւառաց և աշխարհաց՝ թաքուցանեն յինկն զթագաւորութիւնս աշունց: յայնիոյս ծովուն, զորոյ հագիւ ծիր մինչմարեմ՝ որպէս ծիտս մի փայլուն: 'ի յորովտուսն շահատան ափունս, 'ի մէջ երկրեայս, 'ի Երկրի Ժողովոցոց, աշխարհաց և պետութեանն թողիլն, խաղաղելոց կամ խաղաղելոց ընդ երկնաւս... Այլ 'ի տկարանալ զգայականին սեսութեան՝ տկարանան և միտքս 'ի հետաքնին խուզողութեանէ: և վերջոսնեալ զառնամ 'ի մերձուս որ սահմանքս՝ որ երևինս քաղորուսկի: Եւ մինչ այս ամենայն զանազանութիւն բնութեան և շինութեան, ազարանք արօրագրեալք և բաղձամարդ քաղաքանի և զիւղատան, հանգրուանք և ամարատունք ցրուեալք 'ի կողս բլոց և 'ի

լանջս լերանց՝ թուին լուս մուս որպէս յանդոր-
բու քնոյ կամ ՚ի մուսպկոս զբազանս, ա՛նչ
գրուեն զուշ աչացս և մասց պարզունակ նշանքն
քառաթևք, ամենայն ուրեք անկեալք, որպէս
հովանիք և պահապանք ամենայնի՛ զոր տեսանեմս
և նշմարեմ:

Ատանոր իսկ ՚ի սրածայր կատար լերինս որ ՚ի
Թիկանց, իբրև ծառ մի զու նշմարի իսչ կանգուն-
նոյն և ՚ի բարձրագոյնս ևս կատարս կարկառա-
կոյս կոչակաց՝ յոր հազիւ յանդգուեք ՚ի լեւ-
նակրթաց արանց օտս եղին, միայն ձեռակերտ
կանդուն՝ նս է. միակ յիշատակ այնքան ջանից և
տաժանակիր վերելցց, կրթուեալ ՚ի պեղածս
ձեան և սառին, և ՚ի միտքս ամբողջաց, ուր ար-
ծուի անգամ և անգզ ոչ ժամանեն, (զի չիք անգ
նշխար կենդանական կամ բուսական), և անգ իսկ
ամբառնայ նշանն այն Յիսուսի, որպէս յընդմիջա-
շաւից կենաց և մահու, հաղորդակից երկոյունս:
Աւագիկ և յերկտօնն գագաթունս համեռածե
լեւնական՝ մեն մի իսչ մենաւոր. զնոյն նշմարեմ և
՚ի լեւնարլլին որ ՚ի հանդիպոց, յաւելուածով
հանգերձ նշանաց գեղարգեան և սպնդակիր եղե-
գան, նշանք հիւհրաշ անօրէնութեց Յիսուսի, որ-
պէս աւետարանքն ճառեն: Գրանկցս և յափափոյս
քարակտուրս, զորս կարծէի ես ինքն առաջին
կտիւն, գտի զնոյն նշան, կամ կանգուն կամ քան-
գակեալ ՚ի վիմի, և ոչ գիտեմ յորքան ամաց և
գարուց հեռէ, և յորոց ձեռաց և առ իմ յիշա-
տակէ: — Արգեօք ուղեօք տաժանեալ եմմզ
զնոյն՝ յիշատակ անցից իւրոց, կամ վասն բնկերի՛
որոյ ՚ի գնացու եհաս անբէն առ ետեղ վախճան
կենաց, և ամբոյրեկոյն ՚ի պատշաճագոյն ուրեք
մերձաւոր վայրի, կամ բարձեալ անգուստ իջու-
ցաւ բերաւ ՚ի հոյ հայրենի կամ ՚ի շէն մօտաւոր:

Եւ զինչ խիտ առ խիտ անգ ՚ի խոնարհ ապա-

րակից՝ որ ընդ հովանեաւ տաճարին, վարկալ-
բազի որմածով անջրպետելոյ յայլոց ազարակաց,
հուսաբեալ կայցեն մեծ և փոքր խաչաւորք ՚ի վե-
րոյ անարօր գետնոյ գեղջկցս. որոց զմերձաւոր
հոգնս գործելով և առ երի հանգչին զբուն յեայնի,
սակաւուք ՚ի բացեայ ՚ի խրձթէն՝ ուր բացինն
գաւս՝ ի լցս կենաց: Արեքիկն ազարակք. կենաց,
վաստակոյ և մահուան, հուսք առ իրեար, և
երեքին ևս նովն հովանաւորեալ յիսուսական
նշանաւ: Կոյն և ՚ի շինաշատ և ՚ի բաղմունակ
ստանս, ՚ի զլուս և ՚ի ծայր ամենայն մեծամեծ
շինուածոց և աշտարակաց թաղակայեալ երեկ
նշան. որպէս թէ հանուրց՝ լինել ստացուած Յի-
սուսի: Եկատեաց ինձ աղէ մօտագոյնս, և տեսա-
նիցես յաճախագոյն զայգ նշան քան զայլ ինչ
յապատս և յանապատս, ՚ի զլուս և ՚ի կից
ճանապարհոց, յարձանս սահմանաց և աղբե-
րոց, ՚ի գոմ և փակ, ՚ի շինուածս հասարակաց
և յառանձնակոս: Եւ արրագոյն ևս ՚ի վերայ բաղ-
մութեան հաւատացեալ մարդկան. ՚ի թաղ թաղ
գաւորի և յապարց գղեցիի, ՚ի նիշ գորշուց և ՚ի
շուք պատուազիր նշանակաց, ՚ի կուրծս իշ-
խանաց և սպոյլից, յերախակալ սուսերաց զնաւ-
ւորաց, և ՚ի լանջաբեղ կամարս օրիորդաց, ՚ի
խրոխս պարանոց երկուստարդի, և ընդ կակոը
գով անփոքձ կուս, ՚ի ձեղանակ հարսին և ՚ի
շինող փեսայի, և զմիջով անապատակեաց միան-
ձին. որոյ թողեալ զաշխարհ և որ ինչ յաշխար-
հիս՝ զսա միայն եբարձ, անհրաժեշտ նիշ Յի-
սուսի, անպատ թողակ կենաց և ցուպ երկնա-
գնաց ճանապարհին: Եւ յորժամ սպառնից ճա-
նապարհն այն, և թաքիցէ աշխարհս այս բաղմա-
ղբալ ՚ի զգայութենէ մեծի և փոքու, թաղաւորի
և ճգնաւորի, նոյն իսչ լուրջ և խողով հանգչի ՚ի
վերայ սրտիցն՝ զագարելոց յամենայն զբօսանայ

կենցաղոյս, տպացոյցք պարտութեան մահու և
յարութեան հանդերձեց:

Այսբան մեծահանգէս, մեծազօր, ամենահաս
ամենակալ է նշանն Յիսուսի. նշան բարձր և խո-
րին, որոյ ծայր յերկին երկինց ձգտեալ, և խա-
րխիս կտիւն զգորուս գժոխոյ. թեք նորա տարա-
ծեալք յարեւել և յարեւմուտ ընդգրկին զաւ-
հասարակ մարդկութիւն. զհաւատացեալսն զը-
գուելով, զանհաւատսն ստիպելով, զիսնոց՝ խոր-
հուրդ զմայլական, ազխտաց յորգորակ, զայ-
թակիկեցոյ փրկանակ: Սա և քեզ՝ յամուսնոց
ստիեստիք՝ սաննջիւն խելագատակի, առեզուսած
գժուարացոյց. եթէ դամ մի կռեալ հայիցիս,
եթէ զխորդ՝ զոր ոչ հէլլեանկանն հանձար և ոչ
լատինական լեզուք, ոչ հրոսակք հիւսիսոյ, ոչ
կախարդասարն ոսկի և ոչ սաստ բռնաւորաց՝
կարացինն, այս գործն խորթմանեան և մա-
հառուք՝ կարեն և արար. կալու զաշխարհ,
նուաճեաց զսպասուում և զգտն, զխուժ և զգուժ,
զՅոյն և զԻսթ, զԱրամայոյն և զԱրիսոյն: — Բա-
նակ բազմաբիւր, զնուարութիւն նորայբանչ,
ոչ կոտորմամբ թշնամեալս յալթէ և ակրէ,
որբան յաւեա զանձն 'ի սպանդ տալով՝ զսիրտ
գէրէ, և սիրոյ չլծայիւք զհետ ձգէ: Եթէ զար-
մանալիք են գործք Յիսուսի և հեանողաց նա-
րին, մեծագոյն և զարմանք են ինձ չգարմանայք
ընդ այս՝ իմաստասար կոչեցիւումի: Զոր և ան-
զըստին իսկ 'ի սկզբանց քարոզութեան աւե-
տարանին՝ նկատելով հզօրագոյն քարոզչն նորին
Պօղոս, վկայեաց, եթէ արգարե գործս այս յե-
մարութիւն թուիցի յայս զիսնոց աշխարհի. զի
այնքանոց մեծի և ակեղերահոգալիեալ վարդա-
պետութեան հարկ էր կամ անհնարին մոլորու-
թիւն լինել, կամ իմաստութիւն անբաւ: Դատել
և ընտրել ընդ երկուսն մարթ է՝ քննելով զար-

զիւնս աւետարանին. 'ի հանգիսի կացուցանելով
զաշխարհ՝ որպէս էրն 'ի սկզբան քարոզութեան
նորին, և որպիսի ինչ եղև հուպ ընդ հուպ. յոր
անարգութի ստորանկեալ թաւալեալ կայր սիրտ
մարդոյս, և յոր սրբութիւն վերաժամանեաց
յանկարծոյն. որպիսի՝ անդորրութիւն առձեռն
պատրաստ եղև հօրի, և զխորդ վտասաբար
անցանէ յաշխարհէ աստի յաշխարհն անծանօթ:

Եթէ զայստիկ քննելով իմաստասիրի՝ յամա-
սիցի սակաւին կալ արասցոյ յիսուսական գաւ-
թիւն, թող լիցի նմա « Հաւ խաչին՝ յիմաստ-
ութիւն, այլ փրկիկեցս մեզ... Արտուծոյ զօրու-
թիւն և Աստուծոյ իմաստութիւն»: Այսբիւք
վառեալ տկարացն և տխմարաց յայս արտաբնոց՝
փորձեցին և բացին շաւիղ՝ զոր ոչ հուգալեալ զիս
նոցն նշմարեալ էր ակն, և ոչ զօրուորաց երկրի
կոխեալ օտն: Աբբան և կուստեցին զաբք՝ և ոչ
մի յայնցանէ, և ոչ ամ մի յամաց անցցէ առանց
յակնիւս կալոյ ընդ յաւալ-անցեալն, յորս
գործք և հետք անջնջք երևին արակերացնն Յի-
սուսի, սակաւուցն այնոցիկ և փոքրոզեաց, սինջ-
բոր և անկած որերոյ, սրաց գործոցն չիք հան-
գուհակ մեծ 'ի վերայ երկրի, որք զանձինս հե-
զաբար 'ի մահ տալով՝ վասն օրինաց ամենահե-
ղոյն Յիսուսի, և զժողովս և զազնն մարդկան չըր-
ջեցին 'ի հայրաստուր հնազարեան կարծեաց և
հաւատոց՝ 'ի հաւատոս նորս, և այն՝ առանց բնա-
ւին բռնութեան և հրապուրանաց և արուեստից:
Հանգոյն իմն, աղլաղկ և փանաքի էակքն, զորս
չգիտէ բնասոս՝ որգոնն և զեռուսն անուանել՝
եթէ բոյս և բորբոս, որք յանգնզոց ովկիանու-
'ի հրապարակաց կիտից և 'ի խուժան ամէհի ա-
լեաց, անջիւթ շարժմամբ 'ի վեր ամբառնան,
յարեալք կուսայք զիբարեալք մինչև 'ի մակաւա-
սար երեսս միանանց և վերադոյն ևս, պարսպամե-

կառուցեալ զհենդանաառննի խորանն, խորանաս գործելով ճողուց և խուժս խորասկիչս ճեպընթաց նաւուց:

Բնաւոր զգրութիւնն հռոմեական ինքնակալութեան՝ կարճեաց միանգամայն արմատախիլ առնել զաւետարանն նորաստեանի, որպէս հոյսագործ որ խլցել գաղձ մի յանդոյ իւրմէ. և ոչ թէ միայն ոչ բաւեաց ամենայն ուժովն և աշխիւ, այլ և ոչ պաշտպանել զվեճատարած անգատանս հեթանոսութեան՝ զորս արագարագ գրաւեր ճարակեր սերմն և այդին երկնաւոր մշակին: Այնողք և վկանդողք օրոյց ծագաց երբրի՛ գործուցին զամենայն զէն զգրութեան իւրեանց, հնովք հանդերձ և նորահնար մեքենայիք և քսամնելի տանջանորանք, որպիսի ուրեք երբեք չէր երեւեալ, ընդդէմ անդէն և անդխմամբոր խաղաղիկաց հօտի փոքու քրիստոնէից. հուր և սուր, ձէթ և ձիւթ, գէլք և բեւոք, արշաւաթիւք և գործարանք ձուրածոյք, ամենայն իսկ տարբ և անթմփոփեցան ՚ի վրիժակս, ՚ի կտակս և սարսիցս կենաց: Անկեանքին հազարք և բիւրք ՚ի հայածանութագուորաց և բանաւորաց, և քրիստոնէութիւն ոչ նուաղէր, նա մանաւանդ օր ըստ օրէ աճէր և բազմանայր, որպէս թէ ամենայն շիթ արեան հեղոյ որպէս զհասան ցորենոյ անկեալ յերկիր՝ բուռուցանէր ընդ միոյ երեսուն և հարիւր, և որպէս ծուխ իմն անուշահոտ ծաւալեալ ընդմասներ անարգել ՚ի շէն և յանէն, յանապատս անխոյս և յաշխարհամուտ ապարանս նոցին իսկ կայսերաց հաւածողաց. յամենայն վիճակէ և ՚ի մասնէ մտքեր և որսայր, յամենայն սահման կանգնէր զնրանն Յիսուսի, յամենայն գոհոյս և տաճարս վերաբաղմեալ նաղէր. զՓլաւեան ամբիժեաարունն շրջատարած՝ լուսնայր արեամբ նահատակաց, և զմեկենեան Ամենադից բողբոսհաւարք մեհեան՝ փո-

խէր ՚ի տաճար Ամենայն Սրբոց հետեղաց Յիսուսի, և Սօր նորա Կուսի:

Քաղցր է ինձ այսուհետև քրանչանալ ընդ մարգորակ ճարտարութիւն քո, Պետրէ. հիւնալ ընդ եռանգուն վարդապետութիւն քո, Պօղէ, զմայլել ընդ նորալոր սիրաբանութիւնս քո, ով որդիդ Որոման. որոց ոչ կարացին ընդդիմութանել ոչ հինք և ոչ նորք փիլիսոփայոյց. և եթէ ճիկ ոք և հան՝ ափիլերան կել և ջատագովաց քրիստոնէութեան: Սիրանամ ընդ դասակարգութիւն և յաջորգութիւն քոսանայոյց և վարդապետաց և կեղեցոյն Քրիստոսի և լսարանին նորին, զոյս իմնեատան գար անընդհատ. ընդ անայլայլակ հոսանս բանին կենաց, որ որպէս գետս կանակիտ այն ինչ երեւլ յաղբերէ, և անաղտոր և անապաւ մտալօք յառաջելով երթայ և հարթատանայ: Հիացուցանեն զնս հանգեպ նահատակութեանց անթիւ դատուց, ոչ լակ արանց կատարելոց, այլ և մանկանց փոքունց, փափկատուն կանանց և օրիորդաց և պարկեշտ կուսուցաց. սրոց՝ ստուերք անդամ ճոճեալք և խարշափիւնք տերևոց աշննիկց լինէին, զնմադ անահք և վրատահք հորնեալ յատենի խոժոռագէմ՝ դատաւորաց և յատարեղս ըմբշոց, ՚ի հրապարակս անիժուց և ցլուց վայրենեաց, ՚ի վերայ կարմրուցեալ կասկարայից և յետացեալ կաթսայս, ընդ փուշս և ընդ բեւոս սփռեալս մերկոց գարշապաւոցն, որպէս ընդ հըլլս ծաղկանց և սաղարթուց թաւուց կարաւելով ընթմանն. ՚ի հոյո արկեալք ձէ մին որպէս ՚ի հովս ամբարանաց. և ՚ի խարսիս մեալք՝ մատող մատամբք հաւաքեն զկայծակունն և պոտիս բոլորն ինքեամբ ինքեանց նաղելի զլնոցն, յաւհաւատացեայ երկնաւորի և անթաւամ գտակացն, զոր հողոյ աւօքն հուպ նրկասեն. « Ես քրիստոնէայ եմ, Քրիստոնէայ եմ

և էս)), գոչելով և երգելով, մեռանին յերկրի, անմահանան յերկինս և յերկրի. քան զբիւր կեանս նախամեծար արարեալ զիւրու թիւն անձանցն և զչաւատն 'ի Քրիստոս. նմա միայնոյ հարսն անտխեզ՞ պահէալ զսիրտ և զհոգի: Յոր սակս և այլք բազումք՝ զորս ոչ ստիպեաց սուր արիւնխարանձ, այլ իմն օրինակ անարիւն և մըշտամատոյց պատարագուս նահատակին զկեանս բովանդակ. յանգբազ մենարանս և 'ի թաքուն կուսաստանս ապաստանեալ, անբիւծ և անազարտ պահէլ զխոտիկիկ շնորհն այն, հանապազօր մեռելութեամբ զգայականին, ճգամբք և վաստափօք: Երկաշանչեւեր սիրալքք, երկաքանչեւեր մեծայաղճք. և որ արեամբ՝ որպէս վարդիւք զգեցեալ, և որ անարիւն՝ որպէս շուշանօք սպիտակացեալ. գերագոյն քթադանց և հսկայից կատարեալ գործ, ակար և զազխազրիուն մարմնօքն, 'ի իջալումն հեթանոսաց, յամօթ իմաստասիրաց, 'ի խրախոյս անաքնինաց, և 'ի պարծանս խաչի քո, Տէր Քրիստոս:

Պարտ խի և արժան գերագրական ընծայել պատիւ՝ այնձ, որ զմեծագոյնն զամենհարաշն գամենաբերկիւն յանգիման առեղ զգործ՝ կատարեալ 'ի վերայ երկրի. զմեռելութիւն Անմահի, և զան երկբայ փրկութիւն մահահանաջուաց: Յայս յիշատակ 'ի մուսացնս լինին այլ ամենայն յիշատակք. անհետանան ամենայն պէսպէս երևոյլք աշխարհի. զոր օրինակ 'ի պահուս յայտնիկ 'ի խոնարհէլ արեգականս զինի պատուարաց լերանց՝ նուազին տեսարանք տուրնմնինս, և քօպ անսար նսեմութեան տարածանի շուրջ զինև, զամենայն սքօղելով կերպարանս, յորոց միջի միայն զնկասարաս խաչս այս որ 'ի թիկանց կուսե՛ նըշ մարեմ, օրինակ իմն անխնոջ բազկատարածութեամբ կնքելով և հսկելով 'ի վերայ բնութեան խաղաղելոյ:...

Ողջոյն տամ և էս՝ քեզ, սուրբ Խաչ, 'ի մենաւորս վայրի և 'ի լուութե երեկոյնս. զոր՝ փոխանակ արեգականս հրաժարելոյ՝ լուսաւորն լուսով իմանալեալ: Ընդ համարէն հուսատեղեցոյ՝ երկրպագեմ կրելումք առ 'ի քէն՝ Աստուածն Բանի. որ կտա զքեզ 'ի զէն և 'ի գաւազան, 'ի կառս և 'ի հանդիսա, 'ի գործի փրկութեան և 'ի լուծ վարչութեան աշխարհիս այսօրիկ. և եթող կեկեղեցոյ իւրում՝ նշանակ յուսոյ, և լապտեր լուսոյ՝ 'ի խաւարի կենցաղումն: Զքեզ՝ քաջաւեր նահատակաց, սիրոյանս վշտացելոյ, մխիթարութիւն ծանրացելոյ կենօք, խոկումն ճշմարտասիրաց, խաղաղիկ ուխտադիր համբակաց, քայաւամանեակ կուսանաց, ցուպ ծերունեաց, զօրաւիգն ամենայն չարիւս հասակի: Իւր բազկատար ապալելչ պարագայ մարտութեան, որ հարեր գտաճարս Արամազդայ և ցրուեցեր զձծնալանս Աստղան. որ կործանեցեր զգահոյս ամբարտաւանից, և բարձրացուցեր զտեսարհն և զանկամս երկրի: Իւր միայն շիջուցեր զքէն և զոխ, և զպէսպէս ջրից արխախ 'ի հոցս սրախ, և բուսուցեր անդուստ որպէս 'ի փռչ և 'ի կորոյ՝ ըզհեղութիւն և զողջախոհութիւն և զհամբոյր ընկերահաչա: Բն լծեցան 'ի մի ամուս առիւծն ամհհի ընդ եղին հեղոյ, ինձ ընդ ուրու, և գայլք և գաւինք յարօտ 'ի նոյն մակաղեցանս անկասկածք: Բն կատարին խորհուրդք անձամբք. գուս սըրբես զախտի ծնունդս և հրեշտակաց գասակարգես. կնքես 'ի զէմս ընարելոյ, պահպանես յամենայն ընթացս կենցաղալանս. զկեանս կառա-

վարես, զվտանդ ցած ուցանես, զմահ մամբխառն յարգարես, և զյաւիտենից անդունդս հերձեալ զքո նահատական նշանակիրս և պատահամբարս յերանական հասուցանես կայանս։... Անդր և իմ փափազէ հոգիս ժամանել վաղ վաղ, յուսա գնեալ յերաջնէպս ցաւոց և 'ի կայլակս արեան պատարաբեւոյն 'ի վերայ քո՝ Տեանն իմոյ Յիսուսի։ որում աստատին դռնմ բուռն 'ի յոյր հարպէս և զիս, Տէր, Տէր, յիս կենաց իմոյ որպէս և 'ի մուռան։ Յիշեա և զիս, Տէր, 'ի փառանքում, որպէս և 'ի ցաւս քո։ Յիշեա և զիս, Տէր, ընդ ամենայն հաւատացելոց քոց յարքայութեան քում անդ, որպէս և յաթու չարչարանաց քոց սասեկն։...

Այլ միթէ վասն այնոցնիկ միայն եկիր երեւցար, ով Գրիտոսս, որք ծնան 'ի լոյս աւետարանիդ։ միթէ չգուցէ մասն յուսոյ և բարւոյ և այնոցնիկ յորս տակաւին ոչ ժամանեց ձայն քաղցրալուր բարբոսոյ քո։ Ե այնքան խուռն խուժան ազանց յառաջ քան զերեւումն քո յաշխարհ եկելոց, բազմադոյնք քան զորս յես գալստեանդ, ծնունդք և սերունդք յիսնից դարուց, և որք յայժմուս, միթէ կորեան և կորիցնն անփրկիւ։ նակ այբան անհամար հոգիք։ — Քաւ գլծուծէ քում, Տէր, զե եթէ, ըստ քո իսկ բանից, մէք մարդիկ որ չարքս եմք՝ և զիտեմք պարզես բարիս հայթհայթել մանկանց մերոց, քանինն առաւել որ ամենեցուն հայրք ես և հաստիչ, ոչ արասցես անտես զվարեալն արգարտի սկզբնական լուսով զոր վառեցեր 'ի միտ մարդկան։ Ո՛ ժամանակի երեւցար փրկիչ, այլ անժամանակ ես փրկուածիւն։ զլծանձբացեալ խաւար մեղաց և մալրութեան հերձեալ՝ ծարեցար լոյս աշխարհի, որ էրիդ յառաջ քան զարեւ և զլոյս։ Միակ ցուցար պատարադ և պատարադիչ, և զոհ ես համ

աշխարհական, քոհանայ յաւիտենական։ Ռուտեղծեր զմարդ 'ի պատկեր քո բանական, և զստեղծուածոյն զի զպէար ինքնին զպատկերնիւթական։ որպէս զո գաւառեալն 'ի բանարկուէն և զընդ մահու դատապարտեալ՝ քոյին մարդկորէն կրիւք և մահու և աստուածախառն անօրէնութեամբ՝ թափեցես 'ի մշանջնաւոր կորստեանէ, և զայսր յուսոյ առհաւառացայ՝ պէտպէս ցուցաւորութեամբք և գուշակութեամբք ծնունդեալ առ նահապեանն և առ արգարս, եկիր և կատարեցեր 'ի ժամագրեալ քում պահու։ Նոյն յուսով ննջեցին և հանգեան և սպասեալ մնային հոգիք երկիւղածաց որք 'ի սկզբանէն, ոչ միայն յարբահամեան սերնդոց, այլ և յամենայն աղացաց հեթանոսաց՝ որք անխտորն գնացին զհետ նշուլից բնատուր օրինաց սպաւորելոց յոգւոյ որովք և յայժմուս հնարի հուռն փրկութեան զքրկելոյն և հեաւորաց 'ի լոյս աւետարանիդ։ Ռուեսս յոյս ամենայն հոգւոյ և քե փրկելոց է ամենայն որ զարարիչ իւր ինդրէ։ Ռու միայն ես միջնորդ համաշխարհական ընդ կեանս և ընդ մահ, ընդ կենցաղս և ընդ հանդերձեալն, ընդ մարդ և ընդ Աստուած։ Ինքդ իսկ մարդ և Աստուած, « Յիսուս Քրիտոսս, երեկ և այսօր, նոյն, և յաւ » « ւիտենան »:

Ո՛վ երեկ, հեռացեալ և հուպ։ ով վաղիւ աներեկ՝ որ գալոցդ ես՝ ով սերկեան օր համառօս՝ ընդ մէջ երկուց յաւիտենից։ Ո՛վ Յիսուս Քրիտոսս, որ լցեր զամենայն անցեալն, և ընուս զներկայս, և լցցես զապագայսն և զհանդերձեալս. որոյ չիք երեկ և վաղիւ, անցեալ և գալոց։ այլ միայն և միշտ ներկայ՝ անսկիզբն և անվախձան։ Ո՛վ անդունդք յաւիտենականք, որոց շիթ մի միայն մեծ է քան զամենայն ընդարձակութիւնս ծովուց

և զարս դարուց. ո՛վ անժամանակք, որոց չեք եղք
և հուռն, յաասակ և ձեզառն, ոչ կէտ և ոչ կեն.
զրոն: Երե՛կ և վաղե մշտնճեմաւորք, պաղուցա-
նէք զոգիս իմ. աագնապին խորհուրդք իմ, և խաւ-
սապենն 'ի ներկայս. այլ դուք՝ երե՛կ և վաղե յե-
տեւեան, որպէս բարաւորք վե՛թխարիք հարըս-
տայեղք ստուարաբարձք՝ աստի և անտի կառու-
ցեալ կայք զրկնաջափ բարձրութեամբ՝ զրան
միայ մեծի, ընդ որ հասնէ ժամանակք յաւիտե-
նիս 'ի բուռ յաւիտեանս, որպէս ծովք յովկիան
մեծ. և ես 'ի միջի սեմոցն անձկութեմ տատանիմ առ
վայրկեան մի, որպէս որք յառաջ քան զիս և որք
առ ինեա և որք զհետ իմ, 'ի զան և յանցանեղ 'ի
յաւիտեանն անանցական: Ելիք ինչ կայուն և
հաստատուն յանցարանիս յայսմիկ յընդմիջնա-
շաւիղ երկուցն կենաց, բայց միայն վե՛մ մի անյող-
դողդ՝ վերաբուսեալ յանդեղոց. ամենայն ալիք
ժամանակաց յորձանս առեալ՝ բաղիտին զնովաւ,
և նահանջաբեկ մանրին. « Եւ վե՛մն էր ինքն Քրիս-
տոս », 'ի դահոյս եկեղեցոյ իւրում, զոր հաս-
տատեաց 'ի վերայ երկրի՝ որպէս տազաւար մի
ձկնորաց 'ի դուռնաբեկայ կղզիկի 'ի ծիրս չըջա-
տիւտեալ ջուրց ալեաց, մինչև ամբողջեալ զփեղկիս
խորանին՝ յերեկոյանալ դարուց՝ փոխադրեացէ
զապաւինեալուն 'ի նմս՝ յօթեմանս իւր վերին:

Արդ կայ Յիսուս Քրիստոս՝ շքմարտութիւնն
յաւիտենական, և ամենայն զարք և մարդիկ ան-
ցանեն զառաջեաւ. հայի նա 'ի վերայ ազգաց որ
եկին և որ դաւոցն են, և կնքէ նշանաւ իւրով 'ի
վերայ ամենեցուն. և որպէս որսորդ յաւազա-
կուս կղզեկին՝ մանրահիւսակ ուսկանաւն ցանցէ
հանապաղ ուղիս մարդկան, 'ի խորեալ ալեաց
կենցաղոց, որ ասականին զարանեալ գեղերի վե-
շապն մարդադաւ, թեպէտ և վիրաւոր և օրհա-
սական, դատապարտեալ և 'ի բաց ընկեցեալ յե՛-

խանութենէ աշխարհիս, յորոյ վերայ բանացեալն
էր. և յորմէ հերքեալ խաչին զինու՛ ոչ սնդիտա-
նայ զի Յիսուս միայն է փրկիչ և Տէր աշխարհի:

Է.

Արդ զի ցնորիք կենցաղասերք՝ յառեալք 'ի
նեւթ և յերկիր. զի՛ կոծիք մատմուրարք. զի՛
բարձրապարանիք ընդվայրախող իմաստասերք.
զի՛ ջանայք և նեւթեք՝ ընչուբազայքդ և փափկա-
կեացք. զի՛ հարստահարեք՝ բուռնք և իշխողք. զի՛
զանդաեք և զտոյսք՝ վատասիրոց և թերահա-
ւատք: Զուր և անտի է ամենայն խորհուրդ և
զործ, արուեստք և հնարք, զիտութիւնք և օրէնք,
զբոսանք և զբազանք, ցանկութիւնք և ցանկալիք,
ամենայն սուհասարակ՝ որ ոչ իցէ համաշունչ հո-
գւոյ Յիսուսի, որ ոչ իցէ կշեռնալնորին ըժակաւ,
և ոչ նորին մատմուր՝ նշանակեալ: Ամենայն զիտու-
թիւն 'ի շքմարտութենէ անտի նորս փորձեացի. 'ի
նմանէ ելցէ լիճիս կենաց և մահու. իսկ ամենայն
հնարք և զիտաստութիւն և բանութիւն մարդ-
կան 'ի մի վայր եկեալ, ամենայն երկիր յոյն ա-
ռեալ նաև երկից եթէ գոյր հնար միաբանեղ
ընդ երկրի, ոչ բաւեացին յայսմ՛էտէ ցուցանեղ
այլ օրէնս քան զԱւետարանին:

Եւ արդ, ճն առեալ եկ, թող անդր 'ի բաց, ո՛վ
զլուս ընդվայրակոծ, զնոյզ և զննդիր որ 'ի բուն-
թեան, և 'ի զեպս կենցաղոցս և 'ի կիրս անձին.
յորս վայրապար ասնջիս խելամուտ լինեղ, և ոչ
լինիս, եթէ ընդէր այս այսպէս և այն այնպէս.
զի՛նչ իցեն գաղտնիքս այս. առ իմե՛ մթու՛թիւնս.
զի՛ սակաւ է զոր զիտմիջս և անբաւ զոր սնդիտա-
նամք: — Մինչև ցերք անձամբ զանձն վատնես
յանեւանել ի բաւիցս խորհրդոց. մինչև ցերք աազ-

Պատկիցի սիրտ քո 'ի բեղ, ահա մաշեալ և մերձ 'ի սպառելի Չամենայն շունջ լսես, և զամենայն ձայն հարցանես. իսկ ընդէր ոչ լսիցես հանապազատց հարցուածոյն յինքդ 'ի բեղ, թէ Զի խնդրես, որ ոչդ իւրք Չամենայն: — Գողջիր, գոչեաց միանգամ և գու. Զճմարտութիւն խնդրեմ ես, զի գիտացից և հանգեսոյ: — Ահաւարկի ձայն ճշմարտութեան հուպ և յերի. աւարկի Յիսուս որ ասէ, « Ես եմ », բայց եթէ զիս խնդրես՝ զճըշմարտութիւն՝ թող սուր վայրապար խելամուտութեանցդ 'ի բայ երթամ: Ընդէր հանապազ յուրրան յածիս և 'ի կենդրան անգր ոչ զիմես. հիմ 'ի մարմաջ լսելեաց և 'ի շառախելն ամբօխից կրից դեղերկցիս, ո՞ թերահաւատ. և զմարդ բնաւ իջեցիցեր երկմտել, թէ գուցէ բնաւ ճմարտութիւն 'ի վերայ երկրի: Միթէ հնար իցէ լուսոյ թաքսել, կամ արարութեան չերեւել. բայց եթէ և երկիր և երկինք կորկցեն՝ ճմարտութեան կարեւն ոչ է մարթ: Զի ես ճմարտութիւն յառաջ եմ քան զարուստակն. Ես եմ ստացի պայծառ առաւօտին աներկի. Ես 'ի սկզբանէ սկզբանց ընդ անսկզբանն էի և եմ. որպէս լոյս 'ի լուսոյ և գեւ յողբերէ. Բան Աստուծոյ և Որդի Աստուծոյ, հաւասար Հոր ամենայնի, և « Ես և « Հայր իմ մի եմք »: Ամենայն ինչ ինչ եղև, և աւանց իմ եղև և ոչինչ: Անձկակն այն գարուց և աղանց՝ զոր Հրեայն Մեսիս կարգայ, և հեթանոսն՝ Միջնորդ, իմաստասերն՝ Բան, և ամենայն ոգի՝ Փրկիչ, « Ես իսկ եմ, որ խօսիմ ընդ ձեզ ». որ և 'ի հնունն « բազում մասամբք և բազում « օրինակօք կանխաւ խօսեցայ ընդ հարս ձեր, « և 'ի վախճան աւուրցս ինքնին մարգ եղեալ « Ես յայնմապես խօսեցայ յաշխարհի »: Քանզի « Ես եմ ճանապարհ և ճմարտութիւն և Կեանք »: Ես եմ միայն ճանապարհ վերելից մարդոյ յեր-

կրէ յերկինս. և « Ես եմ գուան (կենացն վայրի) . « ընդ իս եթէ որ մասնիցէ՝ կեցցէ. ելցէ և մացէ, « և ճարակ գացէ »: Թէպէս և ըստ նուաստութեան երկրի չսփաւորեալ գուան եղէ անձուկ և ճանապարհ նեղ, այլ այս գուան է որ ստնի 'ի կեանս յաւիտեանական: Եկայք ընդ իր աներկմիս՝ որպէս հօտք հլուք զհեռ հովուի. զի « Ես « եմ՝ Հովուն քաջ. և հովու քաջ գնէ զանձն իւր « 'ի վերայ ոչխարաց: Ես եմ հովուն քաջ. և « ճանաչեմ զիման և ճանաչում յիմոյն », և զանձն « իմ գնեմ 'ի վերայ ոչխարաց: Ես և այլ ևս ոչ « խաբբ են իմ՝ որ ոչ են յայսմ գաւթէ, և զայն « ևս պարտ է ինձ ածել այսր. և ձայնի խնամ « լուսիցեն. և եղիցին մի հօս և մի հովու: . . Ոչ « խաբբ իմ ձայնի խնամ լսեն, և ես ճանաչեմ « զնոսս. և զկնի իմ գան, և ես սամ նոցա ըզ « կեանն յաւիտեանական. և մի կորիցեն յաւի « տեան ». զի « Որ գայ առ իս՝ ոչ հանից զիս ար « աքս »: — Ես եմ ճանապարհ. Ես եմ գուան. Ես եմ հովուն քաջ: Տես, մուտ, զհեռ սրգեաւ, ո՞վ միտք վարանեալ:

Ես եմ ճմարտութիւն, և « Լոյսն ճմարտիս՝ որ « լուսաւոր անէ զամենայն մարդ՝ որ գալոց և « յաշխարհ », յաշխարհ ստուերացեալ մահաւ իմ մեղքն, որ խաւար ածեն կենաց. բայց ինձ « խաւար ոչ եղև հասու », քանզի ինքն իսկ « Ես « եմ լոյս աշխարհի: Որ գայ զկնի իմ՝ ընդ խաւար « մի գնացէ, այլ ընկալցի զլոյսն կենաց: . . Ապա « թէ որ գնայ 'ի գիշերի՝ գայթակրի, զի լոյս ոչ « գայ ընդ նմ »: Գաղտնաբուն են ընթացք կենաց մարդկանդ, և համառօտ ասպարէզ ընթացիցդ. « Փոքր միւս ևս ժամանակ լոյս ընդ ձեզ է. « գնացէք մինչդեռ զլոյսն ունիք, զի մի խաւար « ձեզ հասցէ. զի որ գնայ 'ի խաւարի՝ ոչ զխա « յս երթայ: . . Ես լոյս յաշխարհ եկի, զի ամե-

«նայն որ հաւատացէ յիս՝ ՚ի իսւարի մի մը-
 «նացէ» : Ամենայն ճիշդ և հնարք հանձարոյ ոչ
 բաւեն լուցանել ճրսդ մի ստուգութիւն, և թէ ոչ
 իցէ արկեալ կայծ ՚ի վերուստ. նա և ամենայն
 գիտութիւնք նոցին իսկ օրինաց և մարդարեկոյ՝
 հանդոյն առեղծայն հեռազին ՚ի ծագել արեգական՝
 առաջի աւետարանիս. « Զի օրէնքն ՚ի ձեռն Մով-
 « սիսի առեւան, շորհքն և ճշմարտութիւնն ՚ի ձեռն
 « Յիսուսի Քրիստոսի եղեն » : Եւ « Ես յայդ իսկ
 « ծնեալ եմ և ՚ի գոյն եկեալ յաշխարհ » զի վը-
 « կայեցից ճշմարտութեանն. (և) ամենայն որ ՚ի
 « ճշմարտութենէ կ'ըլէ բարբառոյ իմոյ » : Մա-
 « սիք առ իս, ո՞վ մտակցեն, և աւելք զայս. և երեւք
 ձեր մի ամառեցեն : — « Ես եմ ճշմարտութիւն.
 Ես եմ լոյս աշխարհի » : ... Իզատուրեաց, ո՞վ սիրտ
 ստուերամամ, ծանկիր զվախման քո. սես զճա-
 նապարհս քո, և երթ ընդ սա :

Ես եմ կեանք : Կեանք՝ որ ՚ի սկզբանէն էր, և
 որով ամենայն ինչ եղև. որում և հաղորդ արարել
 զմարդն, ստեղծեալ յիմ պատկեր, և յանեղ-
 ծութիւն հաստատեալ. « Աստուած՝ զմահ ոչ
 « արար, այլ պարարեալ բանարկուին եմուս
 « մահ յաշխարհ » . և թագաւորեաց յԱղամայ՝
 յամենայն որդիս նորա. բայց « Ես եկի՝ զի ըզ-
 « կեանս ունիցին » զարձեալ մարդիկ. և ոչ օր-
 պէս զստաջինն՝ ընդ բազմապատիկ գրաւեալ
 վտանգօք, այլ զի « և առաւելա ունիցին », յու-
 սով անարգել վերափոխութեան ՚ի յամերամ
 երանութիւնան և յանմահութիւն յիսկն հոգւոյ :
 Ոչ իսփանեցի զհարկագրեալն միանգամ մար-
 դոյ՝ մահ երկրաւոր, այլ ՚ի հանդիստ աշխատու-
 թեանցն փոխելի զայն և յանդրոր երեկորին, որ
 ակն ունիցի առաւօտուն փայլման : Եւ ես ինքնին
 զփորձ առի զմահու, ճշմարտացիս և ոչ կար-
 ծեօք. Ես որ անմահս եի կական բնութեամբս,

քոյին մահացու բնութեամբ մեռայ, և ՚ի տա-
 պանի արեւեցայ, որ էի և « Եմ իսկ Յարութիւն
 « և Կեանք » . և « Որ հաւատայ յիս՝ թէպէտ և
 « մեռանի՝ կեցցէ. և ամենայն որ կենդանի է և
 « հաւատայ յիս՝ մի մեռցի յաւիտեան » : Մի եր-
 կընչի որ այսուհետեւ ՚ի մահուանէ, ո՞վ մարդ, զի
 ես փշեցի զճամնիս նորա. « Ի խածաննն՝ համարյր
 տացէ արգարոց : Խոնարհեց զգլուխ քո առաջի
 իմոյս խոնարհեալ զլնոյ ՚ի իսաչին, և արձակեալ
 զոգիդ : Մի զարժուրեր ՚ի գերեզմանն՝ որ ամե-
 նայն ուրեք առ ոսո կայ քո. քանզի և զես եղին
 ՚ի գբի ներքեում և ՚ի իստւարի, և համարեցան
 ընդ մեռեալս յաւիտեանից. այլ իջեալ իմ ՚ի հող
 մահուն՝ օրպէս ցորենահաս մի մերկ լոկ առան-
 ձինն, յարեալ և յարուցի ընդ իս հասկ հասկ
 զննջեցեալն ՚ի սկզբանէ. և յայնմ հետէ « Ես
 « կենդանի եմ, և դուք կենդանի ընեւոց էք » :
 Զի հոգի՝ հրաժարեալ յերկրէ աստի՝ դառնայ
 առ Աստուած որ ստեղծն զնա, մտանել յաղ-
 բիւրն կենդանութեան : — Ես եմ կեանք : Հա-
 ւատա, ո՞վ հոգի կոչի ոճեալ ՚ի կրից մարմնոյ, և
 այսօր իսկ ընդ իս իցես յարքայութեան իմում :
 Փոքր մի ես մնայցէ քեզ պանդխտել ՚ի կեանագ-
 յայդ յերկրաւոր. և զի մի վտանդիցես, մի նքթի-
 ցիս զճանապարհայն համառօտի, Էկ, ահա պատ-
 բասեցի քեզ հաց և բոլեցի աղբիւր կենդանի
 իմովսանն իսկ : Զի յանմահութիւն հրաւիրեցոյ՝
 անմահական վայելէր կերակուր, զիս ինքն՝ հրա-
 շարի փոխարկութեամբ՝ Ետու ձեզ ճաշակ անձա-
 շարի փոխարկութեամբ՝ Ետու ձեզ ճաշակ անձա-
 շարի : « Առէք, կերայք, այս է մարմին իմ » : Ար-
 « բէք ՚ի դամնէ ամենեքին, զի այդ է արիւն իմ » :
 Ճաշակեցէք և տեսէք զիս, զի քաղցր եմ : — Ես
 « եմ հայն կենաց. Որ զայ առ իս ոչ քաղցրիցէ
 « և որ հաւատայ յիս՝ ոչ երբեք մարաւեսցի » :
 « Ես եմ հայն կենդանի՝ որ յերկից իջեալ : Եթէ

« որ ուսիցէ 'ի հացէ յայսմանէ՝ կեցցէ 'ի յաւի-
 « տեան. և հացն զոր ես տաց՝ մարմին իմ է, զոր
 « ես տաց վասն կենաց աշխարհի »... Ար ուտէ
 « զմարմին իմ և ըմպէ զարիւն իմ՝ ունի զկեանսն
 « յաւիտեանական. և ես յորուցից զնա յառուրն
 « յետնում: ... Ար ուտէ զմարմին իմ և ըմպէ
 « զարիւն իմ՝ յիս բնականցէ և ես 'ի նմա... Եւ
 « որ ուտէն զնա՝ և նա կեցցէ վասն իմ »: « Ես
 « ծարաււելոցն տամ յարբերէ ջրոյ կենաց՝ ձրի՝
 « զի ես ինքն եմ « Աղբիւր պարսպազ, ջրհոր ջրոյ
 « կենդանւոյ »: « Եթէ որ ծարաւի իցէ՝ եկեոցէ
 « առ իս և արբցէ. և որ հաւատայ յիս, որպէս
 « և ասեն զիք, զետք յորովայնէ նորա բղխեացն
 « ջրոց կենդանութեան »:

Ո՛վ հոգի մարդոյ, պատկեր Աստուծոյ, ոչ
 առատուերազիր որպէս 'ի տախտակի կամ յորմն
 նկարէն, այլ իրական և անձնաւոր. զի ևս յա-
 պաղես. փութամ, յօգտանց խառնեաց յիսկատիսն
 քօ, և կնաց մնա ընդ նոսին, որպէս երանդ մի յե-
 րանգոց և նշոյլ մի 'ի նշուլից նորին, կամ որպէս
 ինքն իսկ ասաց, ուս մի որթոյն. « Ես եմ, ասէ,
 « որթմն ճշմարիտ... և գուք ուս. որ հաստատեալ
 « է յիս՝ և ես 'ի նա, նա բերէ պատու յոյժ. զի ա-
 « ռանց իմ ոչինչ կարէք ասնէկ... Եթէ կայցէք յիս
 « և բանք իմ՝ 'ի ձեզ կայցեն՝ որ ինչ կամիցիք՝ խնդ-
 « րեսցիք և լինիցի ձեզ »: — « Մի երկնչեր հօս
 « փոքրիկ, զի հաճեցաւ հայր ձեր տալ ձեզ զար-
 « քայութիւն »: « Ի տան Հօր իմոյ օթեվանք
 « բազում են... երթամ և պատրաստեմ ձեզ
 « սեղի. դարձեալ զամ և տունում զձեզ առ իս.
 « զի ուր ենն իցեմ և գուք անդ իցէք »: Արդ « Ծն,
 « արիք, գնացուք աստի », յընդունայն հէթե-
 թանաց կենցաղոյդ, և « Եկայք առ իս՝ ամենայն
 « վաստակեալք և բեւեաւորք, և ես հանդուցից
 « զձեզ: Առէք զուժ իմ՝ 'ի ձեզ, և գտնիք հան-

« զիստ անձանց ձերոց, զի լուծ իմ քաղցր է, և
 « բեւն իմ փոքրոցի »: ...

Եւս, հոգի, փափագող բանի, բարւոյ, ճշմար-
 աի, գեղեցիկ և անանցականի, զինչ ընդ քեզ
 բարբառի Յիսուս: Կուր, լուր գարձեալ, և նմա
 միայնոյ լուր. « Ես եմ... և Հոգի և Փետայն՝ որ
 « գալցն եմ »: « Իբր զիս իբրև զինիք՝ 'ի վե-
 « րայ սրտի քուժ, և իբրև զմտանի յայոյ ձե-
 « սին քո »: զի ես միայն եմ զմտանն սրտի և հան-
 զիստ հոգւոյ. ես Ա, և Օ. սկիզբն և կատարած,
 առաջին և վերջին: Ամենայն ինչ ինև եղև, և
 առանց իմ եղև և ոչ ինչ: « Ես եմ ճանապարհ
 « և ճշմարտութիւն և կեանք »: ևս « Յիսուս Քրիստ
 « տոս, երեկ և այսօր, նոյն և յաւիտեանս »:

Ը.

Ո՛վ հրաշալի և համափիւս հանգարտու-
 թեանս, որ յիս 'ի ներքս և որ շուրջ զինև... Որ-
 պիտի ժամ իցէ այս ժամանակի: ... Իբիւր տա-
 րածեալ կալեալ զընդ մէջ երկնից՝ և երկրիս.
 բայց չունի ինչ զիշերս այս սուգ և տխուր, բայց
 'ի մթութենէ մերոյ սփռելոյ յերես բնութեան՝
 պօտ ազօտ, որպէս քօղ՝ ակամք և մարգարտօք
 ընդելուցեալ՝ 'ի ճոկաւ պատկառոտ: Այլբան
 պայծառ կտրկալեն կաճաւք սասեղացս յան-
 մուր պարզութեան, և այնբան ողորկ և փափուկ
 հաւոր՝ որ զարն ողջն որոտայր 'ի վերայ վայ-
 րացս և տազնապէցուցանէր զիս ծանր ծանր
 խորհրդովք. այլ սոցիւք և զեփիւսք զովք և հե-
 զիկք, որպէս մանկունք նուազածուք խայտան
 ժիրաժիր, խաղաղական իմն չափով և թուով և
 գեղազէլ հեղինակն զարդուն երկնից՝ լուսին բո-

լորակերտ և շառափայլ՝ դեռ 'ի սեմնոց հորիցոնաց
հեռաւորաց՝ որպէս 'ի կյուածոց շրժանց երկրի
և ծովու՝ արձակեալ հողի սիրակցորդ, սազապա-
ճեմ վերանալով, լուսասփիւռս փայլմամբն նշմա-
րեցուցանէ ինձ դմանն մեծաաւորամ միանանցն,
և որպէս պարագլուխ միտբանուծեան նուագաց՝
համագաղանակ յարգարեկող զճով և զցամաք և
զօդս առհասարակ: Եւ իբրև 'ի կասս իմն կիտա-
րեայս կապուտակօք յեւեալ ահամբք և օսկեղև-
նօք խաղացեալ անուօք՝ 'ի գիւլ գալ թուի գիշերս
այս. մանուանդ թէ էս ինքն հանգուցեալ 'ի գա-
հաւորակ գիշերոյս՝ ձգեմ գնամ ընդ հուռն հաս-
տատուծեանն՝ յաշխարհ հեռի, զհեռ հաղթաւոյ
բարեաց և հրաւերանաց սիրայնոց:

Ո՛հ. և ո՞ր հրաւեր սրտազուցելէ՞ քան զձայն
Յիսուսի. կամ զինչ համբաւ բարի քան զաւե-
տարան նորա, որ պատգամք են երկնից և երկրի:
Արդ ամենայն ցածնու ձայն արտաբխի, և Յիսու-
սին խօսի հեղաձայնութիւն. նա միայն լսի և ընու-
որպէս սաւառնեալն 'ի գագաթման Գարեբայ՝
« Զայն մեղմոյ օգոյ, և անդ Տէր ... »

Ընդ բազում գիրս դիտնոց անցեալ էր իմ,
և փոքր 'ի շատէ գեղերեալ 'ի զպրուծիւնս բա-
նասիրաց և 'ի սպչբարս փիլիսոփայոց. խօք
փայլեցակարդք և շարամանութիւնք արուեստա-
կեալք սոփեստայնի և սուրեատոյ՝ հաճեցուցին և
զիս. բայց առաւել բանս և բարբառս գտի 'ի նո-
սին քան փաստս և իմաստս: Թողնի իմն և հետս
'ի միտս իմ. և որպէս արձագանդք յանկարծա-
ծազք զարթնուն յիս սասցուածքն ինչ: Իսկ
բանք Յիսուսի՝ որպէս անգագար շարժումն օդոյս
և շունչ 'ի սնդրենս կենդանեաց՝ հնչէն յիս, խոր
և բարձր, լայն և երկայն, ազդու և անզիմակաց
քան զամենայն ճառս և զիւրաս իմաստնոց և զիւ-
նոց աշխարհիս: Են են և 'ի նոցայնս զբոսանք և

ճաշակք մտաց, այլ ճարակ յաղեցուցիլ և զմոյ-
լեցուցիլ՝ ոչ ուրիք դասնեմ, բայց միայն յաւե-
տարանս Յիսուսի: Որպէս զի էթէ ամենայն մա-
տենից և արձանաց երկրի հրով և ջրով ջնջել
հասանէր, Աւետարանս միայն բաւական էր և է
'ի պէտս մարդոյս, և 'ի գիւռ անկորուստ կենաց՝
ի խորս հօգուոյս տպաւորեցաւ բանն Յիսուսի, և
յիշեմ՝ և 'ի յիշելոյ երբեք ոչ դադարեցից, և թէ
« Ես եմ ճանապարհ և ճմարտուծի և կենեք » .
և Առաքելոյն, և թէ « Յիսուս Բրիստոս՝ երկի և
այտօր, նոյն և յաւիտեանս »:

Չոյն արդ յիշեցուցանել իրձք լինին հօգուոյս,
գէթ առ մի նուագ յաւուրս պանդրխտուծեանն
խոյն, և ձեղ՝ որք ընդ իս ձգէք զանցաւոր զկեանս
աշխարհիս, և որպէս զիս արդեօք բազում ան-
գամ 'ի հօգս և 'ի ծուփս մտաց աստանեալ ասն.
Չէք: Իբր ոչ էթէ զաւագուծեան ինչ թեկն ամի-
ցեմ, կամ համարիցիմ՝ իշխանութիւն ունել՝ լսելի
առնելոյ զբարբառ իմ, և կամ թէ նոր ինչ ունի-
ցիմ ասել. այլ իբր և ընկեր առ ընկեր և եղբայր
եղբոր, նե՞գրէս ևս նե՞գրէս հակից՝ ձեռն մի տամ
և ձեռն ընդունիմ. որպէս մտերիմ ընդ մտերմի բար-
բառիմ, և հաստարկորդ ընդ հաստարկորդի հա-
զորգեմ զկիրս իմ և զիմացուած: Իցէ արդեօք
ընդ կուսակուծեամբ աճիւնանցեալ բանիցս և
կայծ մի վառ. և գայի թերեսս որք որոյ կայծի միոյ
պէտք իցեն. և կայծ մի երեւին ո՞րքան և որպիսիս
վառէ ջախս, որպիսի՞ անտառս կարող է հրդէ հէլ:
Ետտ է ինձ թէ և մի ճրպզ մտաց լուցից, կամ՝
զպատրոյդ մի առկիծեալ սրտի արձարծիցեմ.
մեծ է ինձ՝ էթէ և մի միտք զրդեացին յիմոց առ-
գրանաց. սիրա մի բարբախցի 'ի վեր, և հողի մի
հաւասչիցէ առ Յիսուս, և հանկչիցի: ...

թ.

Ո՛վ սքանչելի գիշեր, դու ազդեալ, որպէս այժմըդ յիս, և առ որս բանք իմ հասցեն. երեւանց և նոցա ամենայն շանդարտութեամբ և ամենայն զարգու քոյին՝ որպէս երևիտք ինձ ՚ի պահուս: Առաջիկ սայլքդ լուսալուծք խոնարհին ՚ի ծովա-կողմն անդր, և բոյլք ըստ բուրից աստեղաց երանեն ընդ թիկունս լերինս, և ՚ի գագաթանէ քառաթեւ նշանին վերանան և իջանեն մի ըստ միտնէ ընդ շաւիղ՝ որ ՚ի սկզբանէն, անշիտթ և անխորտոր: Ընդ հուպ տեղե տայցես սքա լուսաւորին մեծի՝ որ զտիւ պայծառացուցանէ, և ազգ արասցեն ինձ թողուլ ընդ ստուերացս ցայգականաց զմիայնարանս զայս՝ և դառնալ ՚ի խումբս ընկերակցաց իմոց, ՚ի գործ և ՚ի հարկ կենցաղոյս. այլ ոչ ևս ՚ի հոգ պարապարս և ՚ի մտաբերութիւնս պարտասեղուցիչս: Վաղիւ գարձեալ նոյն տեսարան բացցի ընդ արեգակամբ. անդ սղմուկք շինից, և ասս ամոքք անէն վայրոցս. և դարձեալ յարկեց եւրոս ՚ի շտեմարանայ իւրոց՝ կոծեւ զժառանգասանս, մանչել յալիս և հնչեցուցանել զանապատս քրինդհանուրս գնացուցանելով զաշխարհազոյժ ձոյն ընդունայնութեան կենցաղոյս: — Արդ եթէ հանդիպեսցես և դու, ո՛ր ըզեհակից իմ անցորդ, ծառոյս այսմ բացականի, և հողմոյս և անմարգտայն միայնութեանս, կայ, նիստ, հանգիր սասանոր պահ մի կամ երկուս. և զգաս, խորհիս, քննես և կնքես:

Ե՛կ, մի վարչիր, ո՛վ իմաստասէր, որ յուզելով զգիտաստութիւն և զգործ նախնեաց և զարդեաց, և զքո իսկ խելաց ծնունդս, անհաւան աւանդելոյն յայլոց, ճորիս նոր դասնէլ ճանապարհ մը-

տաց և հոգւոյ, կամ ընդ անուանեալ աղտատմը. տայն՝ կրօնս իմն կամակս և հաւանագոյնս մտաց: Լուար ապաքէն և զբանս Քրիստոսի. արդ աղէ ասա, հանդիպեցար այլ ուրեք այդպիսուց վարդապետութեան. կամ ո՞ր յօրէնստրաց և յազանդարեաց այնպիսի ունելով վարս և բանս անպաճոյճս, և այնբան համարձակ խօսեցաւ, և ասաց զինքն լինել բան և լոյս, ճանապարհ և ճշմարտութիւն, կեանս և յարութիւն համօրէն մարդկան: Ո՛ւր այլոր հնչեաց այսպիսի հեղ և հզոր բարբառ: Իջնիցես արդեօք ընդ թեթեւս մտաց ոմանց կամ կամակորաց՝ ատել զայդ ամենայն գիւտ խաբէբայից կամ խաբէցեւոց: — Այլ մեծագոյն ևս մուծցես զարմանս, այնու իսկ զնսնէքոր մարդկան գրածն, որպիսի որ Մատթէոս և Յովհաննէս, մնացական և հիացական հանդիսանայ առ միսս և սիրտս բազմութեան զգաստից և գիանոց, քան որ զՍոկրատոյ՝ Պլատանին և Քսենոփոնի բանք. և սքա՝ իմաստասէրք գոլով ՚ի մանկութեան և վարժեալք յաթենական դպրութիւնս. իսկ նոքա ձկնախոյզք ՚ի ծովալճն և մաքսոզք ՚ի գաւհոս: Եւ եթէ յաւակնիս գտաս կարգել զՅիսուս ընդ Բրահմայ և Չրագեշտի, ընդ Մանու և ընդ Մահմաի, աղէ կռեալ քաջ և զբանս և զլարս նոցին միանգամայն և զհետուզաց նոցուն, և պտակառեսլիր. և թէ իցէ ՚ի քեզ սիրտ ուղիղ և միտք ազատ՝ ոչ շատ անապանիցես ճանաչել զՅիսուս վեհագոյն և վերագոյն քան զմարդ սոսկ:

Ապա և դուք՝ իմաստասէրք յաւիտենական բանի, քահանայք և վարդապետք եկեղեցւոյ, խորհեսլիրք միանգամ ևս զկարգ և զվճակ ձեր ՚ի վերայ երկրի. որք ոչ ՚ի ստուերակերպ օրէնս և տաճարս դեղերէք, այլ ՚ի սեղան ճշմարտի Որդւոյ Աստուծոյ, հանապազորդել զմիան պա-

տարածք ամենհարազ և ամենազօր: Հայեցարուք՝
 յառաջի եղևազ զոհդ, թէ որպիսի՛ հեղ և մըքան
 ահեղ հայեցարուք և՛ ի՛ ձեռս և՛ ի՛ սիրտս ձեր, թէ
 մըքան արեւօք նուազեալք ՚ի սրբութենէ և ՚ի
 հանգարտութենէ: Այլ ևս օգնին ձեզ ահարմեան
 սպասքն, լուսցմուռք և խորութիւնք, այլ սիրտ
 սուրբ պիտի և հոգի խոնկեց, մարմին մեակա-
 կիրթ, մարբութիւն Մարեմայ Կուսի, կատարե-
 լութիւն Հօր երկնաւորի, օրինակ անխորտ, ա-
 ռաջնորդութիւն անաշատ, զգուշութիւն յարա-
 ժամ, երկիւղ առ կուսն, սէր առ ձեռն: ԶՅիսուս
 կերպարանիք. ոչ միայն օրատանեաց Յիսուսի,
 այլ և պաշտանակիցք. և նորին գործուոյ գործակա-
 տարք. նորին վարդապետութեան քարոզք և բա-
 ջայայտիչք. նորին պիտի և հոգի հրակաթ, բոր-
 բոքել առ ժամայն զունկիդիրս, և յերկրէ յեր-
 կինս վերացուցանել: Այլ այնքան սիրալիք և սիրե-
 լիք հանդիսաւիչք՝ եթէ և սերովբեական սուտա-
 նաթիւ սլացիւք իշխիցէք ՚ի խորս աստուածու-
 թեան խոյանալ, — չասացից թէ վայրագար
 յանդգնութեամբ կամ հեռագոտութեամբ, —
 որքան եթէ նկրտիցիք ընդ Յովհաննու և թոյլ-
 մայրի հեղաբար և երկիւղախոսն ի թրթռալ թեա-
 կոխել զՅիսուսիւ: Այլ սերձօրէն որոտալ և սահ-
 մանս վճռել, այլ զիւրբնիալ ևս առնել զաւարե-
 լոցն և զհարցն աւանգութիւնս. ոչ այնքան բըր-
 բրել զպարնիչա թօզ կրնից և հոյակել զհա-
 ւասս, որքան սերտել սիրով զսիրտս ՚ի ճմար-
 տութիւնն նախայայտ, և խաղաղել զիշխճս խու-
 ճապեայս: Ի խնդրել աշակերտայն յաւերլը
 զհաստս՝ բուսական համարեաց Յիսուս զմս-
 նանկոյ հատի չափ. իսկ սիրոյ՝ անասման եցոյց
 չափ, զամենայն գորութիւն մտաց և սրտի մինչև ՚ի
 սպառ: Բարեզք ուսուցանէք. այլ աղպէմ՝
 զուրք « երթալք ուսարուք, զինչ է՝ Զողորմու-

« թիւն կամիմ և ոչ զղո՛ճ »: Քովեմ՝ զվարդապե-
 տութիւնդ, զի յուշ առնեմ՝ ձեզ՝ զմեծագոյն
 վարդապետին յեկեղեցոյք բանս՝ զՊաղատի. որ
 զամենայն վարդապետութիւն և զղիտութիւն և
 զմարդարեութիւնս իսկ խափանելիս ասէ, և զոհեր
 միայն անխափան. Սէր լուսմն օրինաց, սէր մեծ-
 քան զամենայն: Զի զաղուժ անգամ « Քիտու-
 « թիւն հպարտացուցանի, այլ սէր լինի » մըլա:
 Եթէ ճմարտութե էք վարդապետք՝ ապաբնի
 և զիտիցէք զի ոչ յաւելուլ ինչ կորէք յընկա-
 լեալն ցարդ յեկեղեցոյ և ոչ նուազեցուցանել
 ինչ, ապա թէ ոչ ընդ մէջ փակիցիք նորովից Պօ-
 զատի և ինքնին իսկ Տեառն Յիսուսի, որ երկի և
 այսօր, նոյն և յաւիտեանս: — Մին Յիսուս՝ որ
 համաշխարհի վարդապետն էր, և ոչ յաժժու Մով-
 սիսի բազմեցաւ, այլ ՚ի զալար խոտայ վերայ նրա-
 տէր և ուսուցանէր, որոյ ոչ զոյնն սաճարք ճա-
 խարակեալք, ոչ պաղպաճուէք հովանեաց, ոչ
 կառք և ոչ երկխալք. ոչ մի նշանակ զարդու և
 շքոյ, ոչ դապք սպասոււորաց և փոքրաւորաց, և
 ոչ մի օրէնք արտաքին սպասուոյ կամ հրահան-
 ցաց: Այլ արար և պատուիրաց, եթէ « Աեծն
 « ՚ի ձէնը՝ եղիցի ամենեցուն ծառայ »: և « Օրինակ
 « մի ետու ձեզ, զի որպէս էս ձեզ արարի՛ և
 « զուրք առնի՛րք »: այս է, զմիմեանց օտս լուանալ,
 և ոչ զանուազաց կաթիլ զլուխս: Իշխանութիւն
 առէք՝ ոչ ՚ի կապիւլ բեռնին պարտուց ծանոնես
 և զժուարինս, այլ մանաւանդ անձանց անուլ
 նախ և ապա գնել այլոց զլուծն Յիսուսի՝ զքաղցր,
 և զբեան փոքորէք: Բուսական կրէք՝ ոչ հիւսա-
 տեան, այլ ճովուսական, առաջնորդել խաշին
 Բրիստոսի՝ յարտա գալարի և առ ջուրս հանգրս-
 տարարս: Բանալիս ունիք զբանց արքայութեան
 երկնից, առ ՚ի բանալ քան ՚ի փակել. զի և ինքն
 տուողն՝ եկն ՚ի բանալ և հուն գործել զիւրա-

մնւտ : Արծարծել չբամայեցայք զպատարդս մտաց առկայծեաց ՚ի գիտութեան՝ յիսուսական հեղին շնչով : Արբան վերագոյն էք զահուք և որքան բազմաթիւ հօտք հաւատացեալ՝ այնքան մեծ և համարս պահանջիցիք : Յիսուս միայն է ճանապարհ և ճշմարտութիւն . և զնոյն ցուցանել ձեզ աւանդեաց . և նախ առնել ապա ուսուցանել :

Դուարուք ինձ և դուք, մեծամեծք երկրի և սիրուք աշխարհի, որք, և ըստ թաքուն վկայութեան գիտակցութեանդ՝ ոչ ունիք և ոչ էք կարող առնել ինչ մի խնկական առաւել քան զարուակ որ յիտին . ամենայն մեծութիւն ձեր և շուք՝ պաճուճանք իմն են և պատանք կաշկանդիչք, յորոց զերծ ևս են ալքաաքն . կամ որպէս հովանի տարածեալ զձեօք՝ որ և ոչ հատաւափ մի կըսէ, կամ ՚ի բուռն անկանի : Իցէք արդեօք նմանեալ մեծիս այս և հոտաբուռն եղեւնոյ՝ զոր հող երկրի և ցօղ երկից աձնցուցին և պահեցին գուցէ դարս ողջայն . այլ եթէ կամեցեալ էք փայտահարի՝ ՚ի միում աւուր և ՚ի միում ժամու կարէք լուծանել զայնքան երկար ամաց վատասին, գեանաքարչ առնելով զայսքան հսկայաձևս հասակ, և լռեցուցանել զբեմք անապատիս : Ճշմարիտ մեծութիւն մարդոյ՝ է ստանալ զանձն իւր . և հնար առ այս ուսոյց Յիսուս, աշխարհիս և անձինս առելութեամբ, և սիրելով զընկերն սրտէս զանձնն : Աչ ուրեք երևեցաւ այնպիսի որ և հզօր և հարազեա, որ գիտաց զհասարակաց բնութեամբս գերազանցել, վաղել զցաւօք և զերկիւղեւ, աղանաւով ՚ի կասեմածէ, ապահարկ լինել ՚ի մահուանէ : Նինոս և Նարուք, Աղեքսանդր և Թիմոնը՝ յորոց սարսէր երկիր ամենայն, և ոչ միոյ մանկան ահարկանեն այսօր . մեծ և փոքր միօրի նակ խողովիկք են մահու, եթէ ոչ և բաղրի :

« Ամենայն ուղիք զժով ոչ ընուն » , և ոչ ցանկութիւնք զսիրտ . մարթ է համօրէն ուրիանու խաղաղ անցանել և թանալ զգոյզն խողովակ, այլ ընու ոչ : Անանցական է սիրտ, և անցանելեօք ոչ յաղենայ, ոչ հանդարակ . « Գանձեցէք ձեզ, (ով « ընչասէրք ») զանձս յերկինս . . . զի ուր գանձն « ձեր է՝ անդ և սիրտք ձեր եղցին » : Գիտալիք և դուք, բանակալք, զի ոչ մեծ իցէ որ տիեզերաց արկանէ սանձ, այլ որ անձամբ զանձն նուաճիցէ ՚ի լուծ Յիսուսի . փորձեցէք զլուծն զայն՝ և գտիլք զոր ինդրէքդ՝ հանգեսա :

Հուռէք և ձեզ մտաուցանեմ, որոց թօթափեալ զճանուանս խորհրդոց և հոգոցդ, սիրէք ՚ի լըզ իմն հանել զսիրտ՝ ընդ ալեակս և ընդ այերս անօրունս, ՚ի հեշտալին նկրտելով և ՚ի դեղանին . ազգումն արդեօք ոչ լով ՚ի սրտէ՝ այլ և ՚ի հոգւոյ առեալ, զի բաղձոյ զոյք ընդ բարւոյ՝ և գեղեցկին : Սակայն բուցէ մտացեալ իցէ ձեր և զայն, եթէ չեք գեղեցիկ և բարի կատարեալ որ ոչ իցէ ճշմարիտ . զի սա միայն է մնայուն . և որ մնայուն չէ՝ զնայթ խուսափմանն ընդ իւր ունի, զապակաւ նի՛ զարծեցեղոցն վայելց : Ղի՛նչ արդարև յարաբաժս գեղեցիկ քան զմարդ . և ո՛ր գեղ գիւրեղծքան զմարդոցս : Աղէ ժուժեա վայրիկ մի և դու, օրիորդ գեղաղեշ, և մի թաքուցաներ զքեզ ՚ի քէն . զի ոչ այնքան ստուգիւ յանդիման առնէ . քեզ հայելիդ՝ որ ինչ երևիսդ, որքան ներքին հայելեակն հոգւոյ՝ գիտակցութիւնն, զոր ետք և զօր լինելոցդ էս : Կայց, մի զարհուրիք, ճակատ կընքեալ Քրիստոսի նշանաւ . չես ՚ի յաւերժհարսանց կամ յաշխուժուհեաց որ, այլ ՚ի կանանց հողածնաց . ՚ի հօղոյ այսի սնանին և վարդ ընդ փշոյ, շուշանք ընդ գժիւրկի . և ՚ի նոյն անդրէն գառնան, և ոչ անազան : Ննորց գու ինքն զքեզ . ընդէր սյգքան հոգով և խնամով տած իցես զուրք

երեսացոք, մի՛ առ եղծանել մեւրացածոյն զընա-
 տուն շնորհ՝ և թէ՛ անգութք և ծարրք կարօ-
 սիցիս՝ ապա զնողես և ոչ ունող գեղեցկութեան.
 Իսկ եթէ ունիցիս զայն բնաւորապէս՝ զի՛ վայրա-
 պար հոգսս և հսկես սնտախ արուեստի: Չգաս
 ապաքէն՝ զի ոչ ընդ երկար կացցէ՛ ՚ի վերայ գե-
 մացոյ՝ շնորհն շարժուն. այլ որպէս երանգ հնա-
 ցեալ տասկերի՛ թափիցի թէպէս յեղակարծում
 և թէպէս առ փոքր փոքր. և որպէս ծաղկին այն
 դալար, զոր յառաւօտու կապես ընդ գլխոյդ և
 յերեկոյն՝ ՚ի բաց ընկեանուս, և դու՛ ազնուագոյնդ
 ծաղկանց աշխարհի: և դու՛ յերեկոյն միում
 թաղա՛միս. և ՚ի վաղուն ո՛ ժուժայէ՛ հայել ՚ի
 գէմն քո:.. Ուշիմ լեր օրիորդ, և մի՛ վասնես
 զգանձդ պարկեշտութեան՝ ՚ի գգուանս սնտախ.
 և եթէ օրինք լծակցիս առն՝ տես անխտոր տա-
 նել զամոլան. յիշես զափրական կուսանն, հա-
 ւասոց վառիլ լրպտերք և անախելց՝ յարջարիլ
 սլատմուճանք. զի յազգման ձայնի գալտեան
 այնմ որ սասց՝ Ես եմ փեսայն, ելանիցես և դու
 ընդ առաջ, մտանել յօ՛թեմիանս անթառամ
 հարսնարանին:

Եւ դու երիտասարդ, զարդ և պարծանք մարդ-
 կութեան, որ բոս սուղմմեան սարասի ուրախ
 ես՝ ՚ի մանկութեան քում, և սիրես զուարճանալ
 ՚ի վսկօյթ հասակիդ և սրտի. յիշես և դու, զի
 մանկութեան ընդունանութիւն է. « Հասցեն (և
 « քեզ) ամբ՝ յորս առասցես, ոչ էն կամբ իմ ՚ի
 « գոսս»: Ո՛հ, կործանի և քո լարդ արծաթի-
 խորտակի մանեակն ոսիի, մամրի և սափորն կը-
 ճեայ. և դամայ հոլն ՚ի հոյ, « և հոգին առ Սա-
 « սուած՝ որ ետն գնս»: Այցէ՛ քա երբքք ան-
 ցեալ ընդ ագարակն այն խոտաբոյս և սևանիլ, —
 և ոչր չիցէ անցեալ մաս կամ հետի, առ դրան
 եկեղեցեաց գեղձից, և բացաղոյն՝ ՚ի բազմամար-

դոյ բաղաբաց. — յորում ոչ այնքան նոճի՛ երկ-
 նածոճ և ուսեմի երկրամած, որքան խիտ առ խիտ
 երեխն եռոստեանքն անշուքք և անսաղարթք,
 Սուչևար գերեզմնաց. յորմ սարուս գնայ ընդ
 սիրաս վատայ, և խրախոյս յոգիս աւաղքինեաց.
 պրանք իմաստայեցքք. քան զամենայն մասանսս.
 որոց ամենայն սուք յո և պէտ ալժաբեապ սկզբ
 բնաւորեմ ՚ի կատարին յ՛Օ): Այլ ամենայն հասակք
 և վիճակք չափաւորեալ կան: Եւ քանի՛ ծաղկուիք
 գեւաբոյբոյք արագ արագ ծորեալք գնին անդա-
 նօր. ոչքան անխախղ և սրտառու զեղեցկու-
 թիւնք. ոչքան փափկութիւնք գգուեալք ՚ի գիր-
 կր տարփանուայ գարեցեալք ընկեցեալք կան.
 ոչքան գէմբ՝ որոց միտնամ երևոյ թարգաղոյնս
 սպաւորիւր ՚ի սիրա՝ քան զուսասախ կենդանա-
 գիրսն, անդ սպաւորուս եղծեալք և ջնկեալք:..

Ո՛հ. ոչ ՚ի մարմին և յորիւն հոսական՝ այլ ՚ի
 սիրտ և ՚ի հոգի՛ անմեկին յարի ճշմարտան գեղեց-
 կութի: Չարտաբին կերպարանն՝ ինամոլ խաղա-
 զէ նշանն Քրիստոսի, մինչև միւսանդամ ի թեալ
 գնութեան թմբերալ՝ յարուցէ նորակազմ՝ յան-
 նիւթն խառնել պատկեր, և յերանտական լինա-
 զրել անմահութիւն: Ասան այտորիկ սրտանամբ
 և զորովիմբ՝ յորժամ անցանիմբ ընդ գերեզմանս.
 մանաւանդ ՚ի տեսանել զառպանս աղայոյ և բզ-
 զամբան օրիորդի, որք՝ ՚ի կուսական պարզութե
 կամ ՚ի հանդերձանս հարանեաց կորզեալք ՚ի
 կենաց, որքան զառնապէս ունայնացուցին զս-
 կընկալութիւն երկրաւոր՝ այնքան և սնդապէս
 հաստատեցին զերկնաւորն յորս: Քանի՛ աւաղ էր
 տառապալալ ծնողայ և սիրեւաց՝ եթէ չըրդ զե-
 րակենդանութե առաքինեաց և սնեմեաց յորս:
 Այո, այո. ոչք կեցին և ննջեցին ՚ի Քրիստոս՝ զար-
 թիցեն և ՚ի նոյն, որ սասայն. « Ես եմ յարութիւն
 « և կեանք »:

Արդ առ քեզ են բանք իմ, ո՞վ հաւատացեալք
 'ի Քրիստոսս եւ երգուեալ՝ կեալ և մեռանել 'ի նո-
 րին հաւատս, ո՞րք և իցես, եղբայր կամ քոյր
 քրիստոնէայ. որ նստեալ օր մի յաւուրց կենացդ՝
 յայսպիսում միայնութեան, խորհիցես զաւուրան
 անանցական. առ որս ամբ հասակիրք մի ըստ միո-
 յէ հոլովեալ ամինն մերձեցուցանեն, և ընդ հուսդ
 հասուցեն և զքեզ, որպէս զամենայն մարդ՝ զա-
 ռաջինս և զիւրջինս: Աղէ յիշեաց, ո՞վ հոգեկից իմ
 անձանօթ, զի « Հաւատք առանց գործոց մե-
 « սեալ են »: Յիշատ, զի անցանէ ամենայն զոր
 տեսնես և զգաս, որպէս էանց գնաց յառաջնու-
 ցըն քան զքեզ: Ամենայն անցանէ, և միայն բա-
 րին զոր թէ առնես, և յոյս հանդերձեալ կենացն՝
 մնայցեն, և զերժուցեն զքեզ յաղիսից և 'ի
 զայլեակողութեանց կենցաղոս. հանեալ յաշ-
 խարհ՝ ուր ոչ ևս հրապոյրք և որոգայթք փորձա-
 նաց և մեղանաց. « Եւ մահ ոչ ևս գոյ. ոչ սուգ և
 « ոչ սղոյզակ. ոչ ցաւ և ոչ աշխատանք »: Յուշ-
 քեզ, զի ոչ նոր ես գու 'ի բնութեան, և ոչ
 աշխարհ՝ նոր վասն քո կազմեալ. այլ որպէս ամե-
 նայն մարդ՝ ընդ նովնն անկեալ կրիւք և կարեօք.
 « Յառաջ քան զքեզ բազումք, և զէկտ քո ա-
 « մենեքին »: Թէպէտ և ոչ ամենեցուն միօրեկան
 իցէ վախճան և հանդերձեալքն, զի թէպէտ և ա-
 մենեքին նմջիցեն, ըստ Առաքելոյ, այլ ոչ ամե-
 նեքին յարիցեն, զերանականն յարութիւն: Ինքն
 իսկ Տէր Յիսուս՝ որ այնքան փարելիս բարբառե-
 ցաւ, եցոյց՝ ըստ գործոց իւրեանց զոմանս 'ի մարդ
 կանէ փոխել յօգիտ աջակայս, և զայլս յայժիս
 աշեկանս. ոմանց երթալ թուջիլ 'ի կեանս յաւի-
 տեականս, և ոմանց, — ծանր է ինձ արդարեւ
 ասելն, այլ և Յիսուս ասաց. — ոմանց երթալ 'ի
 ամանանն յաւիտեականս: . . Դու մի զարհուրիր,
 մի քրթմնդէր, ամանանս լսելով մշանինսարս:

զի՞ փայթ քեզ զլարե՞լ էթէ զլարին ինդրես:
 Իուռն հար զկենացն խոտամանէ. զի մեծագոյն է
 յոյս փրկութեան քան զկասկած կորստեան: Յի-
 սուս զինքն անչափութեամբ իւրով եզ գրաւա-
 կանս կենաց և յարութեան, և զսպառնալիս գե-
 ճեկնն և զարհուրս մահուս՝ ոչ 'ի կորուստ այլ
 'ի զդուշութիւն կարգեաց:

Աղէ սթափեաց, ո՞վ անձն հաւատացեալ. կայ
 յաշխիճանիդ յոր եզ զքեզ Աստուած. վեր որպէս
 կոխիդ՝ և երևեաց քրիստոնէայ: Քրիստոսի հո-
 դեով ծնար յաւազանէն, կենց և սրբութեամբն:
 Մնայ քեզ միւս ևս ծնունդ, մահու երկամբք,
 զնեղ 'ի խանձարուրս դազազի և 'ի քնարան գե-
 րեզմանի. աքիւլ յերեկոյանալ շարժում կե-
 նացդ, և կանխեալ յանել 'ի լուսանալ միաշա-
 բաթուն մեծին: Քաջալերեանց, հոգի սասուածա-
 նիչ. սակաւիկ ինչ է կենցաղս այս՝ ամենայն սնո-
 տեօքն իւրովք, էթէ ցաւալիք թուրիցին և էթէ
 ինդալիք. և անբաւ են հանդերձալքն: Փոքրա-
 տար է չափ սրափոյշաւ գրեալ և զփոքրդ 'ի կեանս
 յոյս, ուստի չկարասցես ինչ տանել անդ, բայց
 զկամս հոգւոյդ: Եւ էթէ մարթ ինչ էր ոտանալ և
 պահել, սակայն « Զի՞նչ օգուտ է մարդոյ՝ էթէ
 « զաշխարհ ամենայն շահից և զանձն իւր սու-
 « թեաց »: Քեզ ամենայն՝ զհոգւոյդ փրկութիւնն
 համարեա. առանց որոյ մնայ կորուսան անդիւտ:
 Կենց որքան սոճմանեալ են քեզ կեանք, այլ 'ի
 սնտախ մի թարթափիր: Իմն զոր տեսնու. ոչ թէ
 պարասելն 'ի պէտս կենաց չար ինչ իցէ, այլ
 զպիտանին զկենցաղս և զբաղել 'ի հոգու ոչ հո-
 գեկանս. « Զի աստ սակաւ ինչ պիտոյ է », առ 'ի
 կեալ և կեցուցանել զոգի. ընտրեա ընդ Սարե-
 մայ զմանն մի բարի, զփոյթ փրկութեան հո-
 դւոյդ, որ ոչն բարձրի 'ի քէն. և թող զաշ-
 խարհս՝ վարդին իւրում: Եկ, մատիր արք, զիւր

զճակատ քո բազմահոգ և զսիրտ արէկոծ՝ 'ի վե-
րայ քրիստոսեան նշանիս. կափո զոչս քո յօտա-
րոտի ճեմեմանաց, և գացես հանդիստ՝ որում
ոչ գոյ փոխանակ:...

Ճ.

Այլ աւագիկ կարճատեալ ամբոյիկ զիշեր՝ ա-
մենայն աստղաճամուկ զարդուն իւրով, և ա-
րածանի արշալոյս բեճէզազէնաց: Աւագիկ արօ-
սեակն, որպէս ճարմանդ արծաթի որ զերկոսեան
'ի միասին պատանդիցէ՝ զցայդ և զցերեկ: Պալ-
պոջեն 'ի ծայրս ծղօտից մարգարտափայլ կայլակք
յօղոց, և թօթափեալ թատաւեն զճորձս իմ,
ճառողիւն հաւուց լսելի լինի 'ի հեռաստանէ. և
սիւգ զովագին գամ քան զգամ ոյժ առեալ՝ գու-
շակէ կնձ զգարձ հոլմոյն երեկի: Ահա խայծին
ամպք արեւելից. առաւօտ հանգարտ՝ որպէս նըշ-
մարեւի շնորհ աստուածային՝ տարածանի 'ի վե-
րայ լերանց և գաշտաց, ամենեւին պայծառ ամե-
նեւին գեղեցիկ: Ծագիցէ ընդ հուպ իշխանական
տուրնջեան՝ մաւձանել յաշխարհ օր նորընծայ.
միւս ևս չափ ժամանակի մահայու կենաց, որ-
պէս զերեկն և զեռանդն, և սեղի տացէ վազուի:
Եւ զի՛ փոյթ երկիկ և վազուի՝ եթէ այսօրս միայն
տուեալ է մեզ 'ի գործել: Երեկն անցելոց, և վա-
զուն՝ ապագայից, մէք զայսօրս սինդ կալցուք 'ի
վաստակել և 'ի սրտարատել առճիկ անանգականն
առուր, գործս յարամաց սիրոյ: Փոխուցէ ա-
ռաւօտ զառաւօտ և երեկոյ զերեկոյ, յաջորդես-
ցի վազորդայն. իսկ ևս՝ յերեկն և յեռանդն խաւ-
նեալ՝ յանցելոց համարի գտանիցիմ՝ յեա սակա-
ւու միոյ:...

Ողջմբ կաց դու նե՛գէ հակից իմ՝ անցորդ, որ
'ի քոյում՝ սերիւանդ առուր՝ գայցես հակել 'ի հո-
վանուջ միայնութեանս այսօրիկ, յորմէ ևս սեղի
տուեալ մեկնիմ՝ գնամ արդ յայլ մենանոց. զի աշ-
խարհս համօրէն այսուհետեւ միայնութիւն է կնձ
և ամայութիւն մեծ: Լրումն բովանդակ սրտի, նա
և երկրի և երկնից՝ նա միայն է, որ ասաց զինքն լի-
նել ճանապարհ և ճշմարտութիւն, Յարութիւն
և կեանք, Իան և Լոյս. ինքն Տէր («Յիսուս Քրիս-
տոս, երեկ և այսօր, նոյն և յաւիտեանս»):

Եւ նմա վայելէն յինն և յամենայն էութեանց՝
օրհնութիւն և փառք և սէր անդադար: Ամէն.
ամէն:



Faint, illegible text, possibly bleed-through from the reverse side of the page.



8

9621-9624

2013

F-41



